

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀՀ կրթության և գիտության

նախարար՝

Ա. Աշոտյան

«_____» _____ 2009թ.

ՀՀ պետ. գրանցման թ.____

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

Մասնագիտությունը՝ 310111- «Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և
դասիչ, անվանում

տեղեկատվություն»

Որակավորումը՝ տնտեսագիտության բակալավր
անվանում

Ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից

Երևան 2009

1. 310111- «Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն

դասիչ, մասնագիտության անվանում

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1. 310111- «Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն

դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. օգոստոսի 30-ի 1038-Ն որոշմամբ:

1.2. Շրջանավարտի որակավորումը՝ տնտեսագիտության բակալավր

որակավորման աստիճան

310111 - Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն

դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտությամբ տնտեսագիտության բակալավր պատրաստման հիմնական

որակավորման աստիճան

կրթական ծրագրի յուրացման նորմատիվային ժամկետը 4 տարի 8 ամիս:

1.3 . Շրջանավարտի որակավորման բնութագիրը.

310111 Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն

դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտությամբ տնտեսագիտության բակալավր

որակավորման աստիճան

բուհն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝ գյուղատնտես, գիտական աշխատող, ավագ լաբորանտ, լաբորանտ, Ագրոգիտասփյուռի մասնագետ, Ագրոգիտասփյուռի համակարգող, Ագրոգիտասփյուռի տեղական գործակալ, խորհրդատվության մասնագետ, դասախոս:

1.3.1. Մասնագիտական գործունեության բնագավառը.

310111 Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն

դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտությունը առնչվում է գիտության (տեխնիկայի, տեխնոլոգիաների, կառավարման և այլն) այն բնագավառին, և ներառում է մարդկային գործունեության եղանակների, միջոցների և մեթոդների այն ամբողջությունը, որն ուղղված է գիտական հիմք ունեցող գիտելիքների տարածման, նոր տեխնոլոգիաների կիրառման բացատրական աշխատանքների, գյուղմթերք արտադրողների և վերամշակողների համար ուսուցողական ծրագրերի կազմակերպման, առաջավոր գիտական մտքի վրա հիմնված խորհրդատվություն մատուցելու, գյուղական երիտասարդությանն ուսուցանելու հարցերին:

1.3.2. Մասնագիտական գործունեության օբյեկտները. անհատական գյուղացիական

/ազարակային/ տնտեսություններ, ֆերմերային խմբեր, գյուղացիական միություններ, ասոցիացիաներ և կոոպերատիվներ, գյուղական համայնքներ, վերամշակող ձեռնարկություններ, գյուղմթերքի ներկրմամբ և արտահանմամբ զբաղվող անհատներ և ձեռնարկություններ, տեղական, մարզային և հանրապետական խորհրդատվական կառույցներ, գիտահետազոտական կենտրոններ և ինստիտուտներ, ուսումնական հաստատություններ, պատանեկան ակումբներ, մասնագիտությանն առնչվող պետական կառույցներ, ագրոքիզնեսի ձեռնարկություններ և հասարակական կազմակերպություններ:

1.3.3. Մասնագիտական գործունեության տեսակները.

310111- «Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն

դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտությամբ տնտեսագիտության բակալավր սույն պետական

որակավորման աստիճան

կրթական չափորոշիչով սահմանված հիմնարար և մասնագիտական պատրաստությանը համապատասխան կարող է կատարել մասնագիտական գործունեության հետևյալ տեսակները՝

- ա) ուսումնական-խորհրդատվական,
- բ) փորձարարական-հետազոտական,
- գ) կազմակերպչական – կառավարչական:

1.3.4. Մասնագիտական գործունեության ընդհանրական խնդիրները.

310111-«Ազրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն

դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտությամբ տնտեսագիտության բակալավր կախված

որակավորման աստիճան

մասնագիտական գործունեության տեսակից, պետք է պատրաստ լինի լուծելու հետևյալ խնդիրները.

ա/ մասնագիտական (ուսումնական-խորհրդատվական) գործունեության՝ փորձա-ցուցադրական աշխատանքների պլանավորման, մոնիտորինգի և գնահատման համակարգի մշակում: Խորհրդատվության տնտեսական արդյունավետության որոշում: Առաջավոր գիտելիքի և նոր տեխնոլոգիայի ազդեցության որոշում:

բ/ փորձարարական-հետազոտական գործունեություն՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ ստեղծի, ա) մշակաբույսերի բարձր բերքատու և որակով սորտեր, բ) անասնապահական մթերքի քանակի և որակի բարձրացման պայմաններ: Ընդհանրացնի փորձնական ուսումնասիրությունների արդյունքները, ենթարկի դրանք վիճակագրական մշակման և վերլուծի տվյալները: Տեղայնացնի և հրապարակի արտասահմանյան առաջավոր փորձը՝ ազրոնոմիայի, անասնապահության ոլորտներում:

գ/ կազմակերպական-կառավարչական գործունեություն՝ արդյունավետ կազմակերպել դաշտային մշակաբույսերի սերմնաբուծությունը, սահմանել հսկողություն ցանքանյութի և տնկանյութի պահպանման և որակի նկատմամբ: Ծիշտ կազմակերպել սելեկցիոն-գենետիկ աշխատանքները: Կազմակերպել վնասատուների և հիվանդությունների դեմ ինտեգրացված պայքար: Կազմակերպել կենդանիների արհեստական սերմնավորման, ճիշտ կերակրման և առողջ պահվածքի աշխատանքներ:

1.3.5. Որակավորման պահանջները.

Մասնագիտական խնդիրները լուծելու նպատակով տնտեսագիտության բակալավրը

որակավորման աստիճան

կատարում է հետևյալ գործառնությունները՝

- Ծշտում և իրականացնում է գյուղատնտեսական մշակաբույսերի նոր սորտերի ստացման և մշակության էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներ:
- Ծշտում և իրականացնում է անասունների արհեստական սերմնավորման, բուծման, ճիշտ կերակրման և առողջ պահվածքի նոր տեխնոլոգիաներ:
- Տեղայնացնում և մասսայականացնում է հիվանդությունների և վնասատու օրգանիզմների դեմ ինտեգրացված պայքարի համակարգը:
- Կատարում է ազրոէկոլոգիական գոտիների և համայնքի մակարդակներով կարիքների բացահայտում և վերլուծություն, որի հիման վրա կազմում ֆերմերային ուսուցողական ծրագրեր:
- Կազմակերպում է կառավարման ուսուցում գյուղացիական (ազարակային) տնտեսություններում:
- Պարբերաբար ընդհանրացնում և տարածում է արտասահմանյան և տեղական առաջավոր փորձը:
- Մասնակցում է գյուղատնտեսական գիտական և զարգացման ոլորտի ծրագրի կազմման և իրականացման աշխատանքների բոլոր փուլերին:
 - մասնակցում է Ազրոգիտասփյուռ-ի մասնագիտական բնագավառ խնդիրների առաջադրման, ծրագրերի կազմմանն ու լուծմանն ուղղված

աշխատանքների բոլոր փուլերին,

- կազմակերպում է նյութերի, միջոցների, սարքավորման, տեխնոլոգիական գործընթացների արդյունավետ օգտագործման գործառնություններ,
- մասնակցում է ագրոգիտասփյուռ-ի գիտահետազոտական բնագավառ աշխատանքների կազմակերպման, իրականացման և արդյունքների մշակման բոլոր փուլերին,
- ուսումնասիրում է ագրոգիտասփյուռ-ին առնչվող մասնագիտա- բնագավառ կան գրականությունը և գիտատեխնիկական ինֆորմացիան, ծանոթ է բնագավառի գիտատեխնիկական նորույթներին և նվաճումներին,
- օգտվում է ագրոգիտասփյուռ-ի ինֆորմացիոն տեխնոլոգիաներից, բնագավառ տվյալների բազաներից, փորձագիտական համակարգերից և կիրառական ծրագրերի փաթեթներից,
- կազմակերպում է իր ենթակայության ստորաբաժանման աշխատանքը: տնտեսագիտության բակալավրը պետք է ծանոթ լինի՝ որակավորման աստիճան
- իր մասնագիտական գործունեության բնագավառին առնչվող իրավական ակտերին, որոշումներին, կարգադրություններին, մեթոդական և նորմատիվային նյութերին,
- գործող չափորոշիչներին, բնագավառի սարքավորման, ինֆորմատիկայի միջոցների տեխնիկատնտեսական ցուցանիշներին, դրանց շահագործման կարգացույցներին,
- գիտահետազոտական աշխատանքների իրականացման արդյունքով ստացված տվյալների ներկայացման, հաշվետվությունների և տեխնիկական փաստաթղթերի կազմման եղանակներին,
- աշխատանքային օրենսդրության հիմունքներին, աշխատանքի պաշտպանության նորմերին և կանոններին:

1.3.6. Մասնագիտական հարմարման հնարավորությունը.

տնտեսագիտության բակալավրը կարող է հարմարվել հարակից որակավորման աստիճան

մասնագիտական գործունեության հետևյալ տեսակներին՝ կարող է հարմարվել հարակից մասնագիտական գործունեության ագրոպարենային խորհրդատվական տեղեկատվական ոլորտի տարբեր կազմակերպություններում Գ-ԱՀԿ, ԱԳ, ինչպես նաև ձևավորված ֆերմերային տնտեսություններում, որպես նոր տեխնոլոգիաների ներդրման մասնագետ:

1.4. Շրջանավարտի կրթությունը շարունակելու հնարավորությունը

310111 - Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտությամբ:

բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած տնտեսագիտության բակալավրը պատրաստ է կրթությունը որակավորման աստիճան

շարունակելու՝

- կրճատված ժամկետներում՝ ստանալու բակալավրի մասնագետի որակավորման աստիճան 2-րդ մասնագիտության գծով,
 1. մագիստրատուրայում՝ ստանալու տնտեսագետ, մագիստրոսի որակավորում
- ասպիրանտուրայում (միայն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացնելուց հետո)՝ ստանալու գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2. ԳԻՄՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

2.1. Գիմորդի կրթական մակարդակը՝

միջնակարգ (լրիվ) ընդհանուր կամ միջին մասնագիտական կրթություն:

2.2. Գիմորդը պետք է ունենա՝ պետական մուշի վկայական միջնակարգ (լրիվ) ընդհանուր, կամ միջին մասնագիտական, կամ նախնական մասնագիտական կրթության մասին, որում կա գրառում դիմորդի միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ստանալու մասին, կամ բարձրագույն մասնագիտական կրթության մասին:

3. 310111- «Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն
դասիչ, մասնագիտության անվանում

ՍԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ տնտեսագիտության բակալավրի **ՊԱՏՐԱՍՏՄԱՆ**
որակավորման աստիճան

ՀԻՍԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

3.1. տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական
որակավորման աստիճան

Ծրագիրը մշակվում է սույն պետական կրթական չափորոշիչով և ներառում է՝ մասնագիտության ուսումնական պլանը, ուսումնական դասընթացների և պրակտիկաների ծրագրերը:

3.2. Տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական
որակավորման աստիճան

Ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի իրականացման պայմաններին և ուսումնառության ժամկետներին ներկայացվող պահանջները կանոնակարգվում են սույն պետական կրթական չափորոշիչներով:

3.3. Տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական
որակավորման աստիճան

Ծրագիրը ձևավորվում է հանրապետական, բուհական, ուսանողի կողմից ընտրովի և ֆակուլտատիվ բաղադրիչների դասընթացներից:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացները յուրաքանչյուր կրթաբլոկում բովանդակորեն պետք է լրացնեն հանրապետական բաղադրիչում նշված դասընթացները:

3.4. Տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական
որակավորման աստիճան

Ծրագիրը պետք է նախատեսի հետևյալ կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների ուսումնասիրումը՝

| | |
|--|------|
| ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական՝ | ՀՍ, |
| ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական՝ | ԸԲ, |
| ընդհանուր մասնագիտական՝ | ԸՄԴ, |
| մասնագիտացման՝ | ՄԴ, |
| ֆակուլտատիվ՝ | Ֆ, |

ինչպես նաև եզրափակիչ պետական որակավորումը:

3.5. Տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական
որակավորման աստիճան

Ծրագրի բուհական բաղադրիչի բովանդակությունը պետք է ապահովի

շրջանավարտի պատրաստությունը սույն պետական կրթական չափորաշիջով սահմանված որակավորման բնութագրի համաձայն:
Բուհական բաղադրիչում ընդգրկված դասընթացները երաշխավորական բնույթ են կրում:

4. 310111- «Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն

դասիչ, մասնագիտության անվանում

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ տնտեսագիտության բակալավրի **ՊԱՏՐԱՍՏՄԱՆ**
որակավորման աստիճան

**ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ
ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

Դասընթաց

Դասընթացների անվանումը և նրանց հիմնական բաժինները

1
ՀՍՏ

2

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ
ԿՐԹԱԲԼՈԿ

Հանրապետական բաղադրիչ

1.

Հայ ժողովրդի պատմություն 4 կրեդիտ, 120 ժամ

Պատմական գիտության էությունը, մեթոդները: Հայրենական պատմությունը անցյալում և ներակայում: Հայոց պատմությունը որպես համաշխարհային պատմության անքակտելի մաս:

Առարկայի պարբերացումը, ուսումնասիրության մեթոդները: Հայ և օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Հայ ժողովրդի ծագումը և կազմավորումը:

Հին հայկական պետության կազմավորման ու զարգացման փուլերը: Արարատյան թագավորության կազմավորումը և անկումը (9-6-րդ դդ. մ.թ.ա.): Երվանդունիների (Հայկազյան) համահայկական պետությունը: Աքեմենյան Պարսկաստանը և Երվանդունիները: Ալեքսանդր Մակեդոնացին և հելլենիզմը Հայաստանում: Արտաշեսյան արքայատոհմի հաստատումը և Արտաշես 1-ին քաղաքական գործիչը: Տիգրան Մեծ: Արտաշեսյան արքայատոհմի անկումը և Արշակունիների արքայատոհմի հաստատումը: Հին հայկական մշակույթը: Արշակունիների անկումը, Հայաստանի բաժանումները: Քրիստոնեության ընդունումն ու հայոց գրերի գյուտը որպես ազգի գոյապահպանության կռվաններ:

Հայ ժողովրդի պայքարը հանուն անկախության վերականգնման

5- 9-րդ դարերում: Հայ ժողովրդի ազատագրական պայքարը ընդդեմ պարսկա-բյուզանդական բռնատիրության և ձուլման քաղաքականության 5-6-րդ դարերում: Արաբական արշավանքները Հայաստան և ժողովրդական ապստամբությունները 8-9-րդ դարերում: Հայկական մշակույթը 5-8-րդ դարերում:

Բագրատունիների թագավորության հիմնումը, ամրապնդումը, վերելքը և անկումը: Սելջուկ-թուրքերի արշավանքները և Ջաքարյանների իշխանությունը:

Կիլիկիայի հայկական պետությունը (11-14-րդ դդ.): Ռուբինյան իշխանությունը և թագավորության հռչակումը Կիլիկիայում: Հայ-մոնղոլական դաշինքը, Եգիպտական արշավանքները և թագավորության անկումը:

Հայ ազատագրական շարժումները 16-18-րդ դդ.: Հայաստանի 1-ին և 2-րդ բաժանումները Պարսկաստանի և Թուրքիայի միջև: Ազատագրական շարժումների սկիզբը և հետագա ծավալումը 17-18-րդ դարերում: Իսրայել Օրի: Ազատագրական պատերազմներն Արցախում և Սյունիքում 1720-ական թթ. և դրանց վախճանը: Հովսեփ Էմինը և հայ ազատագրական շարժումը: Հայաստանի ազատագրության ծրագրերը: Հայկական մշակույթը 15-18-րդ դարերում:

Հայաստանը 19-րդ դարի առաջին կեսին: 1804-1813թթ. և 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմները և Արևելյան Հայաստանի նվաճումը Ռուսաստանի կողմից: 1806-1812թթ. և 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմները և Հայաստանը: Պարսկահայերի և արևմտահայերի ներգաղթը:

Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրությունը 19-րդ դարի երկրորդ կեսին: Հայ հասարակական-քաղաքական միտքը 1850-1860-ական թթ.: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայկական հարցի միջազգայնացումը: Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը, նրանց ծրագրերն ու գործելակերպը: Արևմտահայերի զանգվածային կոտորածները 1895-1896թթ.: Հայկական մշակույթը 19-րդ դարում:

Հայ ժողովուրդը առաջին աշխարհամարտի տարիներին: Հայկական հարցը 1912-1914թթ.: Առաջին աշխարհամարտի սկիզբն ու ընթացքը: Հայոց ցեղասպանության թուրքական ծրագիրն ու իրագործման փուլերը: Մեծ եղեռնը: Հայ ժողովրդի ինքնապաշտպանական մարտերը: 1917թ. փետրվարյան, հոկտեմբերյան հեղափոխությունները Ռուսաստանում և Հայաստանը:

Հայաստանի առաջին հանրապետությունը (1918-1920թթ.): Հայ ժողովրդի 1918 թ. մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը: Հանրապետության սոցիալ-տնտեսական հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը: Արտաքին քաղաքականությունը: Սերի պայմանագիրը: Թուրք-հայկական պատերազմը: Հանրապետության անկումը:

Հայաստանի խորհրդային հանրապետությունը 1920-1940թթ.: Խորհրդային իշխանության հաստատումը, առաջին քայլերը և տնտեսական ու քաղաքական կարևոր իրադարձությունները: Բռնաճնշումները և դրանց հետևանքները:

Հայ ժողովուրդը երկրորդ աշխարհամարտի տարիներին: Պատերազմի սկիզբը: Հայրենական Մեծ պատերազմը: Հանրապետության տնտեսության վերակառուցումը պատերազմի պահանջներին համապատասխան: Հայ ժողովրդի մասնակցությունը պատերազմին: Թիկունքի հերոսական աշխատանքը: Սփյուռքահայերի մասնակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմին: Հայրենական Մեծ պատերազմի ավարտը: Հայկական հարցը Պոտսդամի կոնֆերանսում:

Հայաստանի խորհրդային հանրապետությունը 1945-1991թթ.: Երկրի տնտեսության վերականգնումը: Հայաստանը Խրուշչովյան բարեփոխումների, Բրեժնևյան հասարակական-քաղաքական կյանքի լճացման տարիներին:

Գործընթացի վերականգնման քաղաքականությունը, Արցախյան շարժումը և Սպիտակի ավերիչ երկրաշարժը:

Հայաստանի Հանրապետությունը 1991-2003թթ.: ԽՍՀՄ փլուզումը: Հայաստանի երկրորդ հանրապետության հռչակումը: Հողի սեփականաշնորհումն ու ձեռնարկությունների ապապետականացումը: Անցումը շուկայական հարաբերություններին: Թույլ տրված սխալներն ու հետևանքները: Հանրապետության արտաքին քաղաքականությունը: Ֆեդասպանության ճանաչման գործընթացը: Արցախյան հիմնահարցը: Հայրենիք-սփյուռք կապերը: Հայկական մշակույթը:

2.

Մշակութաբանություն 2 կրեդիտ, 60 ժամ

Ժամանակակից մշակութաբանության կազմը և կառուցվածքը, մշակույթի փիլիսոփայությունը և մշակութային մարդաբանությունը: Մշակութաբանությունը և մշակույթի պատմությունը, տեսական և կիրառական մշակութաբանության հետազոտությունների մեթոդիկան: Մշակութաբանության հիմնական հասկացությունները, մշակույթ, քաղաքակրթություն, մշակույթի ձևաբանություն, գործառնություններ և սուբյեկտներ, մշակույթի ծագումնաբանությունը և դինամիկան: Մշակույթի լեզուն և խորհրդանիշները, միջմշակութային հաղորդակցում, մշակութային արժեքներ և ավանդույթներ, աշխարհի մշակութային պատկերը: Մշակույթի սոցիալական ինստիտուտներ, մշակութային նույնականությունը և արդիականացումը, մշակույթների տիպաբանությունը: Էթնիկական, ազգային, վերնախավային և զանգվածային մշակույթներ, մշակույթների Արևելյան և Արևմտյան տիպերը առանձնահատուկ և միջին մշակույթներ: Տեղային մշակույթներ, ժամանակակից համաշխարհային գործընթացներում մշակութային ընդհանրացման միտումները: Մշակույթը և բնությունը, մշակույթը և անհատը, մշակույթը և հասարակությունը, մշակույթը և արդիականության գլոբալ հիմնախնդիրները:

3.

Հայոց լեզու և հայ գրականություն 4 կրեդիտ, 120 ժամ

Լեզվի հիմնական գործառնությունները, լեզուն որպես մարդկային մտածողության արտահայտման ու մտքերի ձևավորման միջոց, որպես հաղորդակցության միջոց, որպես մշակութային արժեքների ստեղծման, պահպանման ու կուտակման միջոց, որպես հասարակական-քաղաքական միտումների կրող:

Աշխարհի լեզուները և լեզվաընտանիքները, հայոց լեզվի տեղը Հնդեվրոպական լեզվաընտանիքում:

Հայոց լեզվի զարգացման պատմական շրջանները (գրաբար, միջին հայերեն, ժամանակակից հայոց լեզու՝ արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ): Հայոց գիրը և գրչությունը: Մեսրոպյան այբուբենի ստեղծման համազգային պատմական նշանակությունը:

Ռիդղագրության, կետադրության և ուղղախոսության ժամանակակից համակարգերը, որպես գրավոր և բանավոր խոսքի կարևորագույն չափանիշներ:

Խոսքի կուլտուրայի հիմքերն ու բաղկացուցիչները. ոճաբանություն և ճարտասանական արվեստի հիմունքները:

Ժամանակակից հայերենում ոճի հիմնական տեսակների բնութագրումը. գործառնական, իրադրական և անհատական ոճեր:

Գործառնական ոճեր:

Առօրյա խոսակցական ոճի ընդհանուր բնութագիրը: Գրական լեզվի ներկա վիճակի և նրա հետագա զարգացման ընթացքի առումով առօրյա խոսակցական ոճի ազդեցության դրական և բացասական միտումները: Ժամանակակից հայոց գրական լեզվի անադարտության պահպանման հիմնական խնդիրները:

Գիտական ոճի ընդհանուր բնութագիրը: Գիտական և կրթական-ուսումնական ոլորտների գործունեության լեզվական-խոսքային չափանիշները:

Վարչագործարարական ոճի ընդհանուր բնութագիրը: Վարչատնտեսական, օրենսդիր, օրինաստեղծ և պետական կառավարման, ինչպես նաև քաղաքական, միջազգային, դիվանագիտական ոլորտներում կիրառվող լեզվական-խոսքային չափանիշների առանձնահատկությունները: Այդ ոլորտներին վերաբերող փաստաթղթերի կազմման և դրանց համակարգման հիմնական սկզբունքները: Գովազդային տեքստերի ձևավորման և դրանց մատուցման հիմնական եղանակները:

Հրատարակչական ոճի ընդհանուր բնութագիրը: Հուզական- հոգեբանական ներգործության և փաստարկվածության ու տրամաբանական մոտեցումների համադրումը որպես այդ ոճի գործառության հիմնական սկզբունք:

Գեղարվեստական ոճի ընդհանուր բնութագիրը: Այդ ոճի հիմնական չափանիշների պարզաբանումը հայ և համաշխարհային գրական մեծագույն արժեքների օրինակով:

Ճարտասանական արվեստի պատմության և հիմնական սկզբունքների համառոտ ակնարկ:

Ճարտասանական արվեստի կազմախոսական-բնախոսական հիմքերը. ձայնի դրվածքը, շնչառության տեխնիկան, հնչյունի ձևավորման և արտաբերման տեխնիկան ու կուլտուրան: Խոսքի կազմակերպման հոգեբանական, հուզական և տրամաբանական մեխանիզմները:

4.

Ռուսաց լեզու և խոսքի մշակույթ 4 կրեդիտ, 120 ժամ

Գյուղատնտեսության համար մասնագետներ պատրաստելու խնդիրները որոշարկում են «Ռուսաց լեզու» դասընթացի հաղորդակցական և պրակտիկ բնույթը անհատական խոսքի և երկխոսության, ընթերցելու և գրելու, ընկալման և խոսակցական ունակությունների ձևավորումը և զարգացումը:

Գործառնական-ինաստաբանական հիմքի վրա խմբավորված քերականական գիտելիքների ուսուցումը դիդակտիկ սկզբունքների և ուսումնական նյութի բաշխվածության հաշվառումը: Նվազագույնի հասցված բառային քերականական նյութի մատուցումը որպես խոսքի կուլտուրայի կատարելագործման, խոսակցական սխալների կանխատեսման և դրանց վերացման լեզվական հիմք:

Ռևիզիան վող լեզվի երկրի մշակույթը և ավանդույթները:

Խոսքի բարեկանոնության (կանոնավարության) տարբեր միջոցների կիրառումը որոշակի իրավիճակներում:

Խոսելու ունակությունը. անհատական խոսքի և երկխոսության կազմակերպումը օգտագործվող պարզ բառային-քերականական միջոցների կիրառմամբ:

Հրատարակչային խոսքի հիմունքները (բանավոր հաղորդում, զեկույց և

այլն):

Խոսքի ընկալումը. անհատական խոսքի և երկխոսության ըմբռնումը կեն-
ցաղային և մասնագիտական հաղորդակցման ոլորտներում:

Ընթերցանություն. տեքստերի տեսակները, ոչ բարդ տեքստեր և մասնա-
գիտական ուղղվածության տեքստեր:

Գրավոր խոսքի ունակություն. համառոտագրում, ռեֆերատ, հաղորդում,
դրույթներ: Վարչագործարարական ոճ (դիմում, ստացական, արձանա-
գրություն, տեղեկանք և այլն):

5.

Օտար լեզու 8 կրեդիտ, 240 ժամ

Անգլերեն լեզու

Հնչյունների արտասանության, ինտոնացիայի, շեշտադրական համա-
կարգի և ուսուցանվող լեզվի խոսքի ռիթմի յուրահատկությունը, տառա-
դարձության ընթերցանությունը:

Ընդհանուր և տերմինաբանական բնույթի 2000 ուսուցողական բառային
միավորով բառապաշարի նվազագույն:

Ընդհանուր կիրառման բնագավառի /կենցաղային, տերմինաբանական,
ընդհանուր գիտական, պաշտոնական և այլն/ հասկացություն բառապա-
շարների տարբերակման մասին:

Հասկացություն բառակազմական հիմնական միջոցների մասին:

Հասկացություն ազատ և կայուն բառակապակցությունների, դարձվածա-
բանական միավորների մասին:

Գրավոր և բանավոր հաղորդակցության ժամանակ առանց իմաստի աղ-
ճատման ընդհանուր բնույթի հաղորդակցումն ապահովող քերականական
երևույթներ:

ՌԻսումնասիրվող լեզվի երկրների մշակույթը և սովորույթները:

Բանավոր խոսքը: Պաշտոնական և ոչ պաշտոնական շփման ընդհանուր
հաղորդակցական իրադրություններում առավել չափով օգտագործվող
հարաբերականորեն պարզ բառային-քերականական միջոցների օգտա-
գործումը երկխոսության մեջ և անհատական խոսքում: Հրապարակային
խոսքի հիմունքները /բանավոր հաղորդում, զեկույց/:

ՌԻնկնդրում: Կենցաղային և մասնագիտական հաղորդակցման բնագա-
վառներում երկխոսության և անհատական խոսքի ըմբռնումը:

Ընթերցանություն: Տեքստերի տեսակները. ոչ բարդ գործնական բնույթի և
լայն մասնագիտական ուղղվածության տեքստեր:

Գրավոր խոսքը: Խոսքային ստեղծագործությունների տեսակները. կեն-
սագրություն, փոքր զեկույցներ, անձնական նամակ, գործնական նամակ,
ռեֆերատ:

Ֆրանսերեն լեզու

Դասընթացի ուսուցումը, որը պայմանականորեն բաժանվում է փուլերի,
հետապնդում է հետևյալ պահանջները.

- ուսանողը պետք է ուսումնասիրի և յուրացնի ֆրանսերեն հնչյուննե-
րի արտաբերման առանձնահատկությունները, շեշտադրությունն ու
ռիթմիկ խմբերը, խոսքի մեջ ֆրանսերենին բնորոշ հնչյունների կա-

պակցման ձևերը, ֆրանսերեն նախադասության ինտոնացիան՝ կախված նախադասության բնույթից, ուղղագրական նշանները,

- նվազագույն բառապաշարը՝ մոտ 2000 բառային միավոր, պետք է լինի ինչպես ընդհանուր բնույթի, այնպես էլ մասնագիտական բնույթի,
- խոսքային գիտելիքների ուսուցանումը պետք է ունենա տարբերակված բնույթ՝ ըստ գործածության ոլորտի /կենցաղային, տերմինաբանական, ընդհանուր գիտական, պաշտոնական և այլն/,
- գաղափար կայուն բառակապակցությունների, դարձվածաբանական միավորների մասին,
- գաղափար բառակազմական հիմնական ձևերի մասին,
- քերականական այնպիսի գիտելիքների և հմտությունների ձեռքբերում, որոնք հնարավոր են դարձնում ուսանողի գրավոր կամ բանավոր հաղորդակցությունը ընդհանուր թեմաների շուրջ, ինչպես նաև այնպիսի գիտելիքների ուսուցում, որոնք անհրաժեշտ են մասնագիտական խոսքի զարգացման համար,
- Ֆրանսիայի մշակույթի, քաղաքակրթության, ազգային ավանդույթների մասին տեղեկատվություն,
- հնարավորինս շատ և վարժ խոսելու հմտություն. առավել գործնական և հարաբերականորեն պարզ բառային-քերականական միջոցների օգնությամբ երկխոսության ծավալում կամ շարադրանք հիմնական հաղորդակցային իրավիճակներում՝ պաշտոնական և ոչ պաշտոնական շփումների ժամանակ,
- ծանոթացում մամուլի լեզվին /բանավոր տեղեկատվություն, զեկուցումներ/,
- ընթերցանություն. ոչ բարդ տեքստերի ընթերցում ինչպես լայն պրոֆիլի, այնպես էլ մասնագիտական բնույթի,
- գրավոր խոսք. զեկույցներ, շարադրություններ:

Ըստ գյուղատնտեսության ոլորտի առանձին մասնագիտացումների՝ մասնագիտական տերմինների հատուկ բառացանկեր և տեքստեր:

Գերմաներեն լեզու

Ծրագիրը ենթադրում է գերմաներեն լեզվի իմացության գործնական կիրառում, լեզվին բնորոշ ճիշտ շեշտադրություն և արտասանություն: Քերականական անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերումը, նրանց կիրառումը բանավոր խոսքում և թարգմանչական աշխատանքում: Ուսանողական ընդհանուր բառապաշարի տերմինաբանական բնույթի 2000 բառային նվազագույն միավոր:

Բառապաշարի տարբերակում ըստ կիրառման բնագավառի /կենցաղային, տերմինաբանական, գիտական, պաշտոնական/:

Ընդհանուր հասկացություն բառակազմությանը վերաբերող միջոցների մասին:

Ընդհանուր հասկացություն ազատ և կայուն բառակապակցությունների ու դարձվածաբանության վերաբերյալ:

Քերականական հմտությունների իմացությունը գրավոր և բանավոր հաղորդակցության ժամանակ առանց աղճատման ընդհանուր բնույթի հաղորդակցումն ապահովելու համար:

Ուսուցանվող լեզվի երկրների մշակույթի և սովորույթների յուրացում:

Ընկալումը բանավոր խոսքի ընթացքում:

Առաջադրված հարցերին համապատասխանորեն արձագանքելու կարողություն:

Անհատական խոսքով և երկխոսությամբ ներկայացվող տեքստեր:

Հրապարակային խոսքի հիմունքներ /բանավոր հաղորդում, զեկույց և այլն/:

Տեքստերի ճիշտ ընտրություն՝ ոչ բարդ գործնական և լայն մասնագիտական բնույթի:

Գրավոր խոսքի զարգացում, որն ուղեկցվում է տարբեր խոսքային ստեղծագործությունների հիմքի վրա՝ զեկույցներ, ռեֆերատներ:

Ըստ գյուղատնտեսության ոլորտի առանձին մասնագիտացումների՝ մասնագիտական տերմինների հատուկ բառացանկեր և տեքստեր:

6.

Ֆիզիկական կուլտուրա 240 ժամ

Ֆիզիկական կուլտուրան ուսանողների ընդհանուր կուլտուրական և մասնագիտական պատրաստվածության գործընթացում: Նրա սոցիալ-կենսաբանական հիմունքները: Ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես հասարակական երևույթներ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ֆիզիկական կուլտուրայի մասին: Անհատի ֆիզիկական կուլտուրան:

Ռիսանողի առողջ կենսակերպի հիմքերը: Աշխատունակության օպտիմալացման նպատակով ֆիզիկական կուլտուրայի միջոցների օգտագործման առանձնահատկությունները:

Ընդհանուր ֆիզիկական և հատուկ պատրաստությունը ֆիզիկական դաստիարակության համակարգում:

ՍՊՈՐՏ. Սպորտի կամ ֆիզիկական վարժությունների համակարգի անհատական ընտրություն:

Ռիսանողների մասնագիտական-կիրառական, ֆիզիկական պատրաստությունը:

Ինքնուրույն պարապմունքների մեթոդիկայի հիմունքները և սեփական օրգանիզմի վիճակի ինքնավերահսկումը:

7.

Քաղաքագիտություն 3 կրեդիտ, 90 ժամ

Քաղաքագիտության օբյեկտը և առարկան, մեթոդները, գործառույթները: Քաղաքագիտության և այլ հասարակագիտական առարկաների փոխհարաբերությունները: Քաղաքական ուսմունքների զարգացման հիմնական փուլերը (Անտիկ աշխարհ, միջնադար, նոր և նորագույն շրջան): Հայ քաղաքական մտքի ավանդույթներն, արմատները, սոցիոմշակութային հիմքերը: Արդի քաղաքագիտական դպրոցները:

Քաղաքագիտություն և քաղաքական իշխանություն: Քաղաքական իշխանության իրականացման մեխանիզմները, արդյունավետությունը և լեգիտիմությունը: Քաղաքական համակարգ: Քաղաքական ռեժիմ (վարչակարգ): Դեմոկրատիայի ժամանակակից տեսություններն ու մոդելները: Պետություն, գործառույթները, ձևերը: Պետական իշխանության մարմինները Հայաստանում: Իրավական և սոցիալական պետություն: Խորհրդարան և խորհրդարանականություն: Կառավարման նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական ձևերի համեմատական վերլուծությունը:

Քաղաքական իշխանության սոցիալական սուբյեկտները:

Շահերի խմբեր, քաղաքական լիդերություն և քաղաքական լիդերներ, էլիտա: Ընտրություններ և ընտրական համակարգեր: ՀՀ ընտրական համակարգը: Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր:

Բազմակուսակցական համակարգի կայացումը Հայաստանում:

Քաղաքական գործընթացներ: Քաղաքական արդիականացում: Քաղաքական արդիականացման առանձնահատկությունները ՀՀ: Քաղաքական կոնֆլիկտներ և դրանց լուծման ուղիները: Քաղաքական տեխնոլոգիաներ:

Համաշխարհային քաղաքական գործընթացներ և միջազգային հարաբերություններ: Արդի համաշխարհային հարաբերությունների աշխարհաքաղաքական վերլուծություն: Հայաստանի ազգային շահերը նոր աշխարհաքաղաքական իրավիճակում:

Քաղաքական գլոբալիստիկա. ընդհանուր բնութագիրը, համամարդկային հիմնահարցերի լուծման քաղաքական ուղիները: Քաղաքական կանխատեսում:

8.

Փիլիսոփայություն 4 կրեդիտ, 120 ժամ

Փիլիսոփայություն առարկան: Փիլիսոփայության ձևավորումը, հետազոտության ոլորտները, աշխարհայացքային հիմնախնդիրները: Փիլիսոփայական գիտելիքների կառուցվածքը: Փիլիսոփայության տեղը և դերը գիտության և մշակույթի ոլորտում:

Փիլիսոփայության զարգացման հիմնական փուլերը: Անտիկ Հունաստանի, միջին դարերի, հայոց քրիստոնեական ջատագովական, նոր և նորագույն ժամանակաշրջանի փիլիսոփայական միտքը:

Ուսմունք կեցության մասին: Տարածությունը, ժամանակը, շարժումը կեցության դրսևորման եղանակ: Շարժման, ժամանակի, տարածության վերաբերյալ դասական և հարաբերականության տեսությունները: Շարժում և զարգացում: Գեոտերմինիզմ և ինդեոտերմինիզմ: Օրենք և օրինաչափություն:

Գիտակցություն: Նյութականը և իդեալականը: Գիտակցականը և անգիտակցականը: Լեզու և մտածողություն:

Ճանաչողություն: Առօրեական, գիտական, կրոնական, փիլիսոփայական ճանաչողություն: Գիտելիք և հավատ: Ըմբռնում և բացատրություն: Իմացության զգայական և ռացիոնալ աստիճանները: Ստեղծագործության, բանավեճի, փաստարկման, ինտուիցիայի դերը կենսաբանական հետազոտություններում:

Ճշմարտության հիմնախնդիրը: Ճշմարտության կոնկրետությունը, բացարձակությունը, օբյեկտիվությունը, հարաբերականությունը: Ճշմարտության չափանիշները:

Գիտական ճանաչողության կառուցվածքը: Գիտական իմացության էմպիրիկ և տեսական մակարդակները: Գիտական հետազոտության մեթոդները: Գիտության դերի արժեվորումները փիլիսոփայության մեջ: Գիտատեխնիկական հեղափոխություն:

Մարդու կեցության իմաստը: Մարդը սոցիալական միջավայրի արդյունք, կենսաբանական, հոգեկան նախահիմքերի ամբողջություն: Ազատություն և պատասխանատվություն: Բարոյականություն, արդարություն, իրավունք: Բարոյական արժեք: Գեղագիտական և կրոնական արժեքներ: Խղճի ազատություն:

Բնություն և հասարակություն: Հասարակության դասային շերտավորման հիմքերը: Քաղաքացիական հասարակություն և պետություն: Ազատություն և անհրաժեշտություն: Հասարակության զարգացման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Սոցիալական հեղափոխություն:

Փիլիսոփայության հիմնական ուղղությունները և դպրոցները: 20-րդ - դարի փիլիսոփայական հիմնական հոսանքները:

Կենսաբանության և էկոլոգիայի փիլիսոփայական հիմնախնդիրները: Էկոլոգիան և քաղաքականությունը: Էկոլոգիական աղետ: Բնապահպանական շարժումներ:

9. **Իրավագիտության հիմունքներ և ՁԼՄ օրենսդրություն 3 կրեդիտ, 90 ժամ**
Սահմանադրաման իրավունքի հասկացությունը և ընդհանուր բնութագիրը, ՀՀ Սահմանադրության կառուցվածքը, ընդհանուր բնութագիրը: - 2 ժամ

- Պետական մարմինների համակարգը, տեսակները և լիազորությունները (ՀՀ նախագահ, ԱԺ, կառավարություն, դատական համակարգ, դատախազություն – 6 ժամ)
- Քաղաքացիական իրավունք
- Քաղաքացիական իրավահարաբերություններ
- Իրավաբանական անձինք, տեսակները, ծագումը, դադարումը
- Ձեռնարկատիրական գործունեություն
- Քաղաքացիական իրավահարաբերությունների ծագման հիմքերը, օբյեկտները, պաշտպանության եղանակները
- գործարքներ
- ապահովագրություն
- ներկայացուցչություն
- գրավի իրավունք
- Աշխատանքային իրավունք – 2 ժամ
- Քաղաքացիական դատավարություն – 2 ժամ
- Քրեական իրավունք – 2 ժամ
- Քրեական դատավարություն
- Վարչական իրավունք
- Հողային իրավունք
- Անտառային իրավունք
- Բնապահպանական իրավունք

Չանգվածային լրատվամիջոցներ

- Խոսքի ազատության իրավունք (տեղեկատվություն ստանալու, տարածելու իրավունք)
 - Պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանություն (քաղաքացիական, քրեական պաշտպանություն)
 - Հերքում, պատասխան
 - Չանգվածային լրատվության միջոցների, տեղեկատվության ազատության մասին, հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների վերաբերյալ օրենսդրություն:

10. **Տնտեսագիտության տեսություն 10 կրեդիտ, 300 ժամ**

Տնտեսագիտության տեսության ընդհանուր հիմունքները:

Տնտեսագիտության տեսության առարկան, գործառույթները և մեթոդները: Տնտեսագիտության տեսության զարգացման հիմնական փուլերը: Տնտեսական մտածելակերպի հիմնական սկզբունքները: Բարիքը և նրա դասակարգումը: Պահանջմունքներ: Ռեսուրսներ և արտադրության գործոններ: Տնտեսական ընտրություն: Տնտեսական հարաբերություններ: Սեփականություն և տնտեսվարում: Տնտեսական համակարգերը, դրանց տիպերը և մոդելները: Արտադրական հնարավորությունների կոր: Տնտեսական արդյունավետություն: Տնտեսական ռազմավարություն և տնտեսական քաղաքականություն:

Միկրոտնտեսագիտություն: Շուկա: Առաջարկի օրենք, պահանջարկի օրենք: Անհատական և շուկայական պահանջարկ, առաջարկ, հավասարակշռված գին: Սպառողի և արտադրողի վարքագծերի տեսությունները: Պահանջարկի գործոնները: Եկամտի էֆեկտ և փոխարինման էֆեկտ: Ա-

ռաձգականություն: Առաջարկը և նրա գործոնները: Սահմանային արտադրողականության անկման օրենքը: Մասշտաբի էֆեկտ: Գնի էությունը, գործառույթները և համակարգը, գնային խտրականություն: Մրցակցությունը և նրա տեսակները: Մենաշնորհ, բնական մենաշնորհ, օլիգոպոլիս, մենաշնորհային մրցակցություն, մուտքի և ելքի արգելքները ճյուղում, համեմատական առավելություն: Ձեռնարկության հասկացությունը, արտադրության համակենտրոնացումը և կենտրոնացումը, դեվիդիսիֆիկացիա: Արտադրական գործառույթ: Արտադրության գործոնների շուկաներ: Ծախսերը և դրանց տեսակները (հաստատուն, փոփոխուն, հաշվապահական, տնտեսական, սահմանային ծախսեր, այլընտրանքային ծախսեր): Հաշվապահական և տնտեսական շահույթ: Հասույթի և ծախսերի միջին և սահմանային մեծությունները, արդյունավետություն, փոխհատուցում արտադրության մասշտաբից /նվազող, անփոփոխ, աճող/: Ձեռներեցության տնտեսական բնույթը, գործառույթները և ակտիվացման պայմանները, տնտեսական ռիսկ:

Աշխատանքի շուկա: Աշխատանքի առաջարկը և պահանջարկը: Աշխատավարձ և զբաղվածություն, բյուջետային սահմանափակում, անտարբերության կոր: Կապիտալի շուկա: Տոկոսադրույք և ինվեստիցիա: Հողի շուկա: Ռենտա: Ընդհանուր հավասարակշռություն և բարեկեցություն: Եկամուտների բաշխումը: Անհավասարություն: Պետության դերը:

Մակրոտնտեսագիտություն: Ազգային տնտեսությունը որպես ամբողջություն: Մակրոտնտեսական ցուցանիշներ: Համախառն ներքին արդյունք, նրա չափման եղանակները: Ազգային եկամուտ: Տնօրինվող անձնական եկամուտ: Գների ինդեքսները: Ազգային հարստություն, նրա կառուցվածքը: Համախառն ներքին արդյունքի դինամիկան ՀՀ-ում: Ազգային տնտեսության ճյուղային և բաժանմունքային կառուցվածքներ: Ամբողջական պահանջարկ և ամբողջական առաջարկ, դրանց հավասարակշռություն (AD-AS մոդելը): Սպառում, խնայողություն, դրանց միջին և սահմանային հակումները, գործառույթները: Խնայողություն և ինվեստիցիա: Մակրոտնտեսական հավասարակշռություն և իրական տոկոսադրույք (IS-LM մոդելը): Մուլտիպլիկատորի էֆեկտը: Գործազրկությունը և նրա ձևերը: Ինֆլյացիան և նրա տեսակները: Տնտեսական պարբերաշրջանները: Տնտեսական աճը և տնտեսական զարգացումը: Տնտեսական աճի մոդելը: Պետական ծախսեր և հարկեր: Փողի էությունը, փողի շուկա, փողի պահանջարկը և առաջարկը, դրամաշրջանառություն, փողի տեսությունները: Պետական բյուջե, նրա դեֆիցիտը և ավելցուկը, արժույթի ֆիքսված և լողացող կուրս: Բանկային համակարգ: Դրամավարկային քաղաքականություն: Միջազգային տնտեսական հարաբերություններ: Արտաքին առևտուր և արտաքին քաղաքականություն: Վճարային հաշվեկշիռ: Տարադրամի կուրսը:

Անցումային շրջանի հիմնական գծերը և առանձնահատկությունները ՀՀ-ում: Սեփականաշնորհում: Բաշխումը և եկամուտները: Տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը: Սոցիալական ոլորտի վերափոխումները: Բաց տնտեսության ձևավորումը:

11.

Տնտեսագիտական սոցիոլոգիա Յկրեդիտ, 90 ժամ

Դասընթացը ընդգրկում է հետևյալ թեմաները՝

- սոցիոլոգիան որպես գիտություն, ուսումնասիրության առարկան, օբյեկտը, խնդիրները, գործառույթները: Սոցիոլոգիայի զարգացման փուլերը և դպրոցները,
- ուսումնասիրության մեթոդները: Ընտրանք: Փաստաթղթերի վերլուծություն, դիտում, հարցում: Հետազոտության արդյունք-

- ների վերլուծություն,
- տնտեսական մոտիվացիա և ռացիոնալիզմի տիպեր: Պահանջ-մունքների դասակարգման Ա.Մասլոուի սանդղակի բնութագրերը,
- աշխատաշուկայի ձևավորումը և զարգացումը սոցիոլոգիայում: Գործազրկության ձևերը և դրա սոցիալ-հոգեբանական հետևանքները,
- տնտեսական ադապտացիա, դրա ձևերը և էտապները: Ադապտացիայի ղեկավարման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները,
- աշխատանքային կոնֆլիկտներ: Կոնֆլիկտների ծագման պատճառները, ձևերը և լուծման ուղիները,
- սոցիալ-տնտեսական շերտավորում, դրա պատճառները, չափանիշները, ձևերը,
- գործարարության հիմնախնդիրները, զարգացման պատմական տիպերը: Գործարարի սոցիալ-հոգեբանական կերպարի բնութագրությունը,
- մարդը տնտեսական գաղափարախոսության համակարգում: Տնտեսական գաղափարախոսության ձևերը,
- փող, ֆինանսներ, բորսա, հարկեր: Դրանց սոցիալ-հոգեբանական տեսանկյունները:

Բուհական բաղադրիչ

1.

**ԸԲ. ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ**

Հանրապետական բաղադրիչ

1.

Բարձրագույն մաթեմատիկա 11 կրեդիտ, 330 ժամ

Անալիտիկ երկրաչափություն: Կոորդինատների մեթոդ: Հիմնական խնդիրները հարթության վրա: Ուղղի հավասարման տարբեր տեսքերը հարթության վրա: Երկու ուղիղների կազմած անկյունը: Երկրորդ կարգի կորեր:

Գծային հանրահաշիվ: Որոշիչներ և նրանց հատկությունները: Գործողություններ մատրիցների հետ: Հակադարձ մատրից: n անհայտով n գծային հավասարումների համասեռ և ոչ համասեռ համակարգեր: Կրամերի կանոնը: n անհայտով m գծային հավասարումների համակարգեր: Գաուսի մեթոդը: Մատրիցի ռանգը: Կոմպլեքս թվեր: n չափանի վեկտորական և էվլիդյան տարածություններ: n չափանի վեկտորների սիստեմի գծային կախվածությունը և անկախությունը: Բազիս: Վեկտորների սիստեմի ռանգը: Գծային ձևափոխություններ և նրանց մատրիցը: Անցում մի բազիսից մյուսին: Մատրիցի սեփական արժեք և սեփական վեկտոր: Նրանց հատկությունները: Քառակուսային ձևեր: Քառակուսային ձևի բերումը կանոնական տեսքի:

Մաթեմատիկական անալիզ: Թվային հաջորդականություններ: Անվերջ փոքր և անվերջ մեծ հաջորդականություններ և նանց հատկությունները: Չուզամետ հաջորդականությունների հատկությունները: Մոնոտոն հաջորդականություններ: „e,, թիվը: Մեկ փոփոխականի ֆունկցիա: Ֆունկցիայի սահմանը և անընդհատությունը: Երկու նշանավոր սահմաններ: Անընդհատ ֆունկցիայի հատկությունները: Ֆունկցիայի ածանցյալը և նրա երկրաչափական իմաստը: Ֆունկցիայի դիֆերենցիալը: Բարձր

կարգի ածանցյալներ և դիֆերենցիալներ: Դիֆերենցիալ հաշվի հիմնական թեորեմները: Անորոշությունների բացումը: Ֆունկցիայի հետազոտումը դիֆերենցիալ հաշվի մեթոդներով և գրաֆիկի կառուցումը: Մի քանի փոփոխականների ֆունկցիաներ: Հիմնական հասկացողություններ, սահմանը և անընդհատությունը, մասնակի ածանցյալներ, դիֆերենցիալ: Ածանցյալ ըստ ուղղության: Գ-րադիենտ: Ֆունկցիայի էքստրեմումները: Նվազագույն քառակուսիների մեթոդը: Անորոշ ինտեգրալ: Անորոշ ինտեգրալի հաշվման եղանակները: Ռ-ացիոնալ կոտորակների, իռացիոնալ և եռանկյունաչափական արտահայտությունների ինտեգրումը: Որոշյալ ինտեգրալ և նրա հատկությունները: Նյուտոն-Լայբնիցի բանաձևը: Որոշյալ ինտեգրալի հաշվման եղանակները: Անիսկական ինտեգրալներ: Որոշյալ ինտեգրալի կիրառությունները: Սովորական դիֆերենցիալ հավասարումներ: Անջատվող փոփոխականներով, համասեռ և համասեռի բերվող հավասարումներ: Առաջին կարգի գծային և գծայինի բերվող հավասարումներ: Երկրորդ կարգի գծային հաստատուն գործակիցներով համասեռ և ոչ համասեռ հավասարումներ: Թվային շարքեր: Շարքի զուգամիտությունը և տարամիտությունը: Գրական անդամներով շարքերի զուգամիտության հայտանիշները: Նշանափոխ շարքեր: Կամայական անդամներով շարքերի զուգամիտությունը: Բացարձակ և պայմանական զուգամետ շարքեր: Ֆունկցիոնալ շարքեր: Աստիճանային շարքեր: Թեյլորի և Մակլորենի շարքեր:

2. **Ազրոէկոլոգիա և շրջակա միջավայրի պահպանություն 3 կրեդիտ, 90 ժամ**

Կենսոլորտը և մարդը: Էկոհամակարգեր, օրգանիզմները և միջավայրի փոխհարաբերությունները: Ազրոէկոհամակարգերը և դրանց գործելակերպը տեխնոգենեզիսի պայմաններում: Շրջակա միջավայրի գլոբալ հիմնախնդիրները: Բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և բնության պահպանության էկոլոգիական սկզբունքները: Միջազգային համագործակցությունը և շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները: Մթնոլորտի օդի, ջրի, հողերի, բուսական ու կենդանական աշխարհի պահպանությունը և դրանց արդյունավետ օգտագործումը: Զիմիացման էկոլոգիական հիմնախնդիրները: Բույսերի պաշտպանության կենսաբանական պայքարը և շրջակա միջավայրը: Երկրագործության ավանդական և այլընտրանքային համակարգերը: Կենսաբազմազանությունը և էկոհամակարգերի կայունությունը: Էկոլոգիական տեսակետից անվտանգ գյուղատնտեսական մթերքների արտադրության տեխնոլոգիաները: Կայուն էկոհամակարգերի ստեղծման սկզբունքները: Ռեսուրսախնայողական տեխնոլոգիաները գյուղատնտեսության մեջ: Ազրոէկոլոգիական մոնիթորինգ, տարածքների էկոլոգիական վիճակի գնահատումը: Էկոլոգիական քաղաքականությունը և գյուղատնտեսության էկոլոգիացման հիմնախնդիրները:

3. **Կենսագործունեության անվտանգություն 3 կրեդիտ, 90 ժամ**

Ներածություն: «Կենսագործունեության անվտանգություն» առարկայի դերը, նպատակն ու խնդիրները: «Մարդ-մեքենա-միջավայր» համակարգը: Վտանգավոր և վնասակար արտադրական գործոնների բնութագիրը և առողջ ու անվտանգ աշխատանքային պայմանների ստեղծման հիմնական ուղիները: Կենսագործունեության անվտանգության միջոցառումների ներդրման տնտեսական արդյունավետության որոշումը: «Կենսագործունեության անվտանգության» բնագավառին վերաբերող նորմատիվաիրավական փաստաթղթերը, հիմնական օրենսդրական ակտերը, աշխատան-

քային, քաղաքացիական և քրեական օրենսգրքերը: «Կենսագործունեության անվտանգություն» ծառայության կառուցվածքը և խնդիրները, ղեկավարների և մասնագետների իրավունքներն ու պարտականություններն այս բնագավառում: Արտադրական վնասվածության և մասնագիտական հիվանդությունների ուսումնասիրման մեթոդները, տնտեսական հետևանքները և գնահատման եղանակները: Կենսագործունեության անվտանգության միջոցառումների պլանավորումը և ֆինանսավորումը: Աշխատատեղերի օդերևութաբանական և միկրոկլիմայական պարամետրերի նորմավորման սկզբունքները և նորմաները, չափման և հսկման միջոցներն ու եղանակները: Արտադրական աղմուկ, վիբրացիա և վնասակար ճառագայթումներ: Դրանցից պաշտպանվելու եղանակները, չափման և հսկման միջոցները: Էլեկտրահարվածից պաշտպանվելու կազմակերպչական միջոցառումներն ու տեխնիկական միջոցները: Ամպրոպաշտպանություն: Հրդեհ, հրդեհների սոցիալ-տնտեսական հետևանքները: Շենքերի և շինությունների հրակայունությունը, դրա բարձրացման եղանակները: Կրակմարիչ տեխնիկա: Տեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը: Հակահրդեհային ահագանգում և ջրամատակարարում: Հրդեհի ժամանակ մարդկանց էվակուացիայի, նյութական միջոցների հեռացման և պահպանման կարգը:

4.

Էկոնոմետրիկա 5 կրեդիտ, 150 ժամ

Դասընթացի հիմնական թեմաներն են՝ էկոնոմետրիկ մոդելավորման հիմնական ասպեկտները, էտապները և հիմնահարցերը: Ջուլգային ռեգրեսիա և կոռելացիա, բազմակի ռեգրեսիա և կոռելյացիա, փոքր բառակուսիների մեթոդը, կոռելյացիայի բազմակի և մասնակի գործակիցները, ղեկավարման միջոցների բազմակի գործակիցը ժամանակային շարքերը էկոնոմետրիկ հետազոտություններում, տրենդաին /միտումի/, պարբերական բաղադրիչի և սեզոնայնության բացահայտումը, ժամանակային շարքերի մոդելների հիման վրա կանխատեսման իրականացումը: Վիճակագրական տվյալների վերլուծության և ընդհանրացման հիմնախնդիրները, ավտոկոռելյացիա, Դարվին Վոթսոնի չափանիշը :

5.

Քաղ. պաշտպանություն և անվտ. արտ. իրավիճակներում

4 կրեդիտ, 120 ժամ

Ներածություն: Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության համակարգը, խնդիրներն ու նշանակությունը: Քաղաքացիական պաշտպանության կառուցվածքն ու կազմավորումները: Արտակարգ իրավիճակներ, դրանց դասակարգումը, բնութագրերը, և կանխարգելման ուղիները: Ռադիացիոն և քիմիական վարակման օջախներ: Տեղանքի ռադիոակտիվ վարակում, ռադիոակտիվ վարակվածության աղբյուրները և ռադիոակտիվ ճառագայթման չափման միավորները: Մարտական թունավոր քիմիական նյութերի դասակարգումը, բնութագիրը, ներգործության ձևերը և դրանցից պաշտպանվելու եղանակները: Ռադիացիոն և քիմիական իրադրության գնահատման մեթոդները: Դոզաչափական և քիմիական հետախուզության սարքերի տեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները: Բնակչության պաշտպանության կազմակերպումը արտակարգ և պատերազմական իրավիճակներում: Ապաստարաններ, հակառադիացիոն և պարզագույն թաքստոցներ: Անհատական պաշտպանական միջոցների տեսակները, դրանց պահպանման բաշխման և օգտագործման կարգը: Արտակարգ իրավիճակների ռիսկի գնահատումը: Ռիսկի կվանտիֆիկացիան, անհատական ռիսկի ուսումնասիրման և գնա-

հատման մեթոդները: Արտակարգ և պատերազմական իրավիճակներում գյուղատնտեսական օբյեկտների գործունեության կայունության ապահովման հիմնական ուղղություններն ու մեթոդները: Արտակարգ և պատերազմական իրավիճակներում փրկարարական և անհետաձգելի վթարային-վերականգնողական աշխատանքների կազմակերպումն ու անցկացումը: Գյուղատնտեսության վարումը ռադիոակտիվ աղտոտվածության պայմաններում:

6.

Երկրագործություն 5 կրեդիտ, 150 ժամ

Գյուղատնտեսության արտադրության առանձնահատկությունները: Երկրագործության առարկան, խնդիրները և կապը այլ առարկաների հետ: Բույսի կյանքի անհրաժեշտ գործոնները, դրանց դերը բույսի կյանքում: Երկրագործության օրենքները: Բույսի կյանքի գործոնների կանոնավորումը (ռեժիմները) երկրագործության մեջ:

Մոլախոտային բուսականությունը և նրա դեմ պայքարի միջոցառումները: Հողի մշակումը, խնդիրները: Հողի մշակման համակարգերը: Ցանքաշրջանառությունների գիտական հիմնավորումը, դասակարգումը և դրանց ազդեցությունը անհատական և տնտեսական կազմակերպական դերը:

Երկրագործության համակարգերը և դրանց ժամանակակից բաղկացուցիչ մասերը:

Հողը և դրա բերրիությունը, բերրիության տեսակները: Բերրիության բարձրացման միջոցառումները:

Հայաստանի հիմնական հողային տիպերը, հիմնական հատկությունները և գյուղատնտեսական օգտագործումը:

Հողային կադաստր, նշանակությունը: Հողերի բոնիտումը և տնտեսական գնահատումը:

Հանքային և օրգանական պարարտանյութերի հիմնական տեսակները:

Հաշվարկներ պարարտանյութերի չափաբաժինների վերաբերյալ. ծրագրավորվող բերքի անհրաժեշտ պարարտանյութերի քանակի և տնտեսական արդյունավետության հաշվարկներ:

7.

Բուսաբուծություն և բանջարաբուծություն 4 կրեդիտ, 120 ժամ

Բուսաբուծությունը որպես գիտություն և գյուղատնտեսական արտադրության ճյուղ: Դաշտային մշակաբույսերի կենսաբանական առանձնահատկությունները, տեսակային և սորտային կազմը, բերքի ձևավորման հիմնական օրինաչափությունները, առավել նվազագույն ծախսերով էկոլոգիապես անվտանգ, բարձր ու որակով բերքի ստացման տեսական հիմունքները և պրակտիկ միջոցառումները: Առանձին բույսերի մշակության տեխնոլոգիաները՝ դերը ցանքաշրջանառության մեջ, նախորդները, հողի մշակման և պարարտացման համակարգերը, ցանքի համար սերմերի նախապատրաստումը, ցանքի (սածիլման) առանձնահատկությունները, վեգետացիայի ընթացքում բույսերի նկատմամբ կիրառվող խնամքի աշխատանքները, առանձին մշակաբույսերի բերքի նախնական մշակումը և պահպանումը: Կիրառվող տեխնոլոգիաների առարձնահատկությունները ազարակային (ֆերմերային) տնտեսություններում:

Բանջարաբուծությունը որպես գյուղատնտեսական արտադրության կարևոր ճյուղ: Բանջարեղենի օգտագործման տարեկան սննդաբաժնի գիտական հիմնավորումը: Բաց դաշտի և պաշտպանված գրունտի բանջարաբուծության զարգացումը: Բանջարաբուստանային մշակաբույսերի կենսաբանական առանձնահատկությունները, տեսակային և սորտային կազմը նրանց բնութագրումը, նվազագույն ծախսերով, էկոլոգիապես

անվտանգ, բարձր ու որակով բերքի ստացման տեսական հիմունքները և պրակտիկ միջոցառումները: Առանձին բույսերի մշակության տեխնոլոգիաները բաց դաշտում և փակ գրունտում, նրանց բերքատվության առանձնահատկությունները: Գիտության դերը բանջարաբուստանային մշակաբույսերի մշակության տեխնոլոգիաների կատարելագործման և նոր արժեքավոր սորտերի ստացման գործում:

8.

Այգեպտղաբուծություն 4 կրեդիտ, 120 ժամ

Բուսաբուծությունը որպես գիտություն և արտադրության ճյուղ, նրա խնդիրները: Դաշտային մշակաբույսերի խմբավորումը, նրանց ընդհանուր բնութագիրը և ժող. տնտեսական նշանակությունը: Հանրապետության համար կարևորագույն մշակաբույսերի կենսաբանական և մշակության առանձնահատկությունները, սորտային կազմը: Դրանց մշակության տեխնոլոգիաների առանձնահատկությունները գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում:

Բանջարաբուծությունը որպես բուսաբուծության ճյուղ: Հիմնական բանջարային մշակաբույսերի կենսաբանական առանձնահատկությունները, սորտային կազմը և մշակության տեխնոլոգիաները բաց և փակ գրունտում:

Առարկան ընդգրկում է խաղողի վազի և պտղատու մշակաբույսերի ագրոկենսաբանական հիմունքները: Վեգետատիվ բազմացում և տնկանյութի աճեցման տեխնոլոգիա, այգու հիմնումը և խնամքը, խաղողի և պտուղների արտադրության մասնագիտացումը և սորտերի տեղաբաշխումը ըստ ՀՀ գյուղատնտեսական գոտիների: Սորտերի կենսաբանական և արտադրատնտեսական առանձնահատկությունները:

Դասընթացի տեսական և գործնական բնույթի բոլոր բաժինները հետապնդում են մեկ նպատակ՝ մատնանշել տարեց-տարի ցածր ինքնարժեքով, բարձր, լավորակ բերք ստանալու հիմնախնդիրների լուծման ուղիները:

9.

Անշարժ գույքի կադաստր 3 կրեդիտ, 90 ժամ

Հասկացողություն անշարժ գույքի և անշարժ գույքի կադաստրի մասին: Անշարժ գույքի կադաստրի խնդիրները: Տարածագնահատման գոտիականություն: Անշարժ գույքի կադաստրային գնահատում: Գույքահարկ և հողի հարկ: Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ: Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների կադաստրային արժեքի որոշումը: Անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից շինությունների կադաստրային արժեքի որոշումը: Հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների կադաստրային արժեքի որոշումը: Հողերի կադաստրային գնահատման էությունը: Հողի հարկման բազայի ձևավորման համակարգը ՀՀ-ում: Անշարժ գույքի գնահատման ստանդարտ: Հասկացողություն անշարժ գույքի շուկայական արժեքի և գնի մասին: Արժեքի տեսակները: Լավագույն և առավել արդյունավետ օգտագործում: Անշարժ գույքի շուկայական արժեքի որոշման համեմատական մեթոդ: Անշարժ գույքի շուկայական արժեքի որոշման եկամտային մեթոդ: Կապիտալավերքածման գործակից: Անշարժ գույքի շուկայական արժեքի որոշման ծախսային մեթոդ: Հողերի գնահատման մեթոդները: Գնահատման մեթոդների կիրառումից ստացվող արդյունքների համաձայնեցումը: Անշարժ գույքի գնահատման հաշվետվության կառուցվածքը:

10.

Գյուղ. մեքենայացում 2 կրեդիտ, 60 ժամ

Գյուղատնտեսության մեքենայացում առարկան բաղկացած է չորս բաժիններից՝ 1.տրակտորներ և ավտոմոբիլներ, 2.գյուղատնտեսական մեքենաներ, 3.անասնապահական ֆերմաների մեքենայացում, 4. գյուղատնտեսական տեխնիկայի շահագործում:

1. Տրակտորներ և ավտոմոբիլներ բաժնում ուսանողը պետք է ծանոթանա գյուղ. արտադրությունում օգտագործվող տրակտորների ընդհանուր կառուցվածքին, աշխատանքին և տեխնիկատնտեսական ցուցանիշներին:
2. Գյուղատնտեսական մեքենաներ բաժնում ուսանողը պետք է ծանոթանա հողի մշակության, ցանքի ու տնկման, բույսերի խնամքի ու պաշտպանության, կերերի հավաքման ու հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի, հացահատիկի գտման ու տեսակավորման, ինչպես նաև մելիորատիվ մեքենաների կառուցվածքին ու աշխատանքներին:
3. Անասնապահական ֆերմաների մեքենայացում բաժնում ուսանողը պետք է ծանոթանա կերերի նախապատրաստման ու բաշխման, ջրամատա-կարարման, կաթի նախնական մշակման, ոչխարների խուզի ու բրդի տեսակավորման, ինչպես նաև գոմաղբի հավաքման ու հեռացման մեքենասարքավորումների հետ:
4. Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործում բաժնում ուսանողը պետք է ծանոթանա արտադրական գործընթացի տեսակներին, մեքենատրակտորային ագրեգատների (ՄՏԱ) դասակարգման սկզբունքներին, դրանց տեխնոլոգիական և շահագործման բնութագրերին, ՄՏԱ համալրման եղանակներին, դրանց կինեմատիկական ու տեխնիկա-տնտեսական ցուցանիշների (աշխատածախսումների, վառելանյութի ծախսի) որոշման սկզբունքներին, պատկերացում կազմի ՄՏԱ շրջադարձի ձևերի ու շարժման եղանակների մասին, ծանոթանա բուսաբուծությունում ՄՏԱ շահագործման դրույթներին (օպերացիոն-տեխնոլոգիա, մեքենայացված աշխատանքների տեխնոլոգիական քարտ, հացահատիկի, կարտոֆիլի և այլ մշակաբույսերի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաներ և այլն), գաղափար կազմի տրակտորների տեխնիկական սպասարկումների և ախտորոշման մասին, ծանոթանա մեքենատրակտորային պարկի նախագծման, նավթային տնտեսության կազմակերպման և տեխնիկական միջոցների պահպանման հարցերին:

11.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ 2 կրեդիտ, 60 ժամ

Գյուղատնտեսական մեքենաների նշանակությունը և դասակարգումը: Նրանց դերը գյուղատնտեսական արտադրության ինտենսիֆիկացման գործում:

Հողամշակման մեքենաներ, նրանց տեսակները, նշանակությունը, կառուցվածքը, տեխնոլոգիական ցուցանիշները ըստ հողային գոտիների:

Ցանքի ու տունկի մեքենաներ, նշանակությունը, տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները և տեխնոլոգիական ցուցանիշները: Պարարտացման մեքենաներ, նշանակությունը,

տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները և տեխնոլոգիական ցուցանիշները: Բույսերի պաշտպանության մեքենաներ, նշանակությունը, տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները և տեխնոլոգիական ցուցանիշները: Կերերի հավաքման, վերամշակման մեքենաներ, կառուցվածքային առանձնահատկությունները և տեխնոլոգիական ցուցանիշները: Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի և բերքի հետագա վերամշակման մեքենաներ, նրանց կառուցվածքային առանձնահատկությունները և տեխնոլոգիական ցուցանիշները: Արմատապտուղների բերքահավաքի մեքենաներ, կառուցվածքային առանձնահատկությունները և տեխնոլոգիական ցուցանիշները: Հողերի բարելավման և մելիորացման մեքենաներ, տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները և տեխնոլոգիական ցուցանիշները: Փոքրաչափ գյուղատնտեսական տեխնիկա, նրանց կիրառման առանձնահատկությունները և արդյունավետությունը ժամանակակից ֆերմերային տնտեսություններում

12.

Գյուղ. մելիորացիա 2 կրեդիտ, 60 ժամ

Հողերի բնական պայմանների արմատական բարեփոխումները, մելիորացիայի զարգացման դերը երկրի կայունության և ամրապնդման գործում: Հիդրոտեխնիկական մելիորացիայի տնտեսական արդյունավետությունը և նրա բարձրացման ուղիները: Ռոռզման մելիորացիա: Ռոռզում և ոռոզման համակարգեր: Ռոռզման տեսակները, նրանց կիրառման պայմանները: Ռոռզման ջրի աղբյուրները, ջրառու կառուցվածքները, կարգավորող և ուղեվորող, ջրհավաք և ջրվան և դրենաժային ցանցը, ճանապարհային ցանցը ոռոզման համակարգերում: Գյուղ մշակաբույսերի ոռոզման ռեժիմը: Գումարային ջրասպառումը, նրա բաղադրիչները և որոշման մեթոդիկան: Ռոռզման նորմը: Ջրման նորմ: Ջրումների տեսակները: Հիդրոմոդուլի գրաֆիկի կազմումը և կոմպլեկտավորումը: Մակերեսային ինքնահոս ջրման հիմնական սկզբունքները: Ջրի հողի մեջ ներծծման օրինաչափությունը: Գյուղ մշակաբույսերի ոռոզման եղանակները ու տեխնիկան: Մակերեսային ոռոզում: Ակոսներով և մարգերով ջրման տեխնիկան: Ռոռզումը անձրևացմամբ: Արհեստական անձրևացման հիմնական սկզբունքները: Անձրևացնող ապարատներ և մեքենաներ: Աշխատանքի արտադրողականությունը անձրևացմամբ ջրելու ժամանակ: Ենթահողային ոռոզում: Ռոռզման հիմնական սկզբունքները: Առավելություններն ու թերությունները: Կաթիլային ոռոզում: Ռոռզման բաց ցանց: Ցանցի ջրանցքների դասակարգումը ոռոզվող տարածքներում: Մայր ջրանցքի նախագծումը: Ռոռզման ջրանցքների հաշվարկային ծախսերի սահմանումը: Մշտական և ընդհատումներով աշխատող ջրանցքների ծախսերի որոշումը: Ռոռզման համակարգի ՕԳԳ-ի որոշումը: Ջրանցքներից ջրի ֆիլտրացիոն և գոլորշիացման կորուստների որոշումը: Ջրանցքների հաշվարկային բրուտտո ծախսերի որոշումը: Ռոռզման ջրանցքների երկայնական պրոֆիլի կազմումը, նրա ընդլայնական չափերի որոշումը հիդրավլիկական հաշվարկի միջոցով: Ռոռզման ջրանցքներից ջրի կորուստների դեմ պայքարի միջոցները և նրանց կիրառման պայմանները: Ռոռզման ջրանցքների կոնստրուկցիաները: Ճանապարհային ցանց ոռոզման համակարգերում: Ջրհավաք ջրման ցանցի ջրանցքների հաշվարկային ծախսերի որոշումը: Ռոռզելի հողերի աղակալումն ու ճահճացումը: Ջրային և աղային հաշվեկշիռը: Հողերի աղակալման տեսակները: Հողերի մելիորացման մեթոդները: Աղակալված ալկալի հողերի մելիորացիոն լվացման միջոցով: Դրենաժի կիրառման պայմաններն ու տիպերը: Հորիզոնական և ուղղաձիգ դրենաժ աղակալված հողերի ժամանակ: Ռոռզման ջրի աղբյուրները: Ռոռզման ջրի

աղբյուրների տիպերը: Ոռոգման աղբյուրների ոռոգման ունակությունը: Դարավանդների տեսակները և նրանց հաշվարկը:

13.

Հողաշինարարություն և հողային կադաստր 2 կրեդիտ, 60 ժամ

Հողային կադաստր հասկացողությունը, նշանակությունը և խնդիրները: Հողային կադաստրի բաղկացուցիչ մասերը, կադաստրի ձևերը և սկզբունքները: Կադաստրի զարգացման պատմությունը: Հողային ֆոնդը որպես հողային կադաստրի օբյեկտ: Հողային կադաստրի վարման նպատակով ելակետային տեղեկատվության ստացման, մշակման և վերլուծման մեթոդները: Հողային կադաստրը հողային հարաբերությունների կարգավորման և ղեկավարման մեխանիզմ: Հողատիրման հողօգտագործման գրանցումը, հողագրանցման փաստաթղթերը: Հողերի հաշվառման հասկացողությունը և օրինաչափությունները, հողահաշվառման միավորները: Հողատեսքերի դասակարգումը, հողերի հաշվառման ձևերը և սկզբունքները, հողահաշվառման փաստաթղթերը, բովանդակությունը և ձևերը: Հատակագծաքարտեզագրական և այլ նյութերի բովանդակությունը հողերի հաշվառման ընթացքում: Հողերի գրանցման և հաշվառման մեքենայացումը: Տվյալների մոդելները և բազաները: Հողային պաշարների ղեկավարման ավտոմատացված համակարգը: Հողերի գնահատման հիմանհարցերը: Հողերի գնահատման հասկացողությունը, հողերի բռնիտավորումը, հողերի բռնիտավորման նյութերը և փաստաթղթերը, հողերի հատկությունները և ցուցանիշները, հողերի դասակարգման և խմբավորման մեթոդները: Հողերի տնտեսական գնահատման ցուցանիշները: Հողերի գնահատման սանդղակների կազմման սկզբունքները տարբեր հողատեսքերի և կատեգորիաների համար: Ներհամայնքային հողերի գնահատումը: Հողերի արժեքային գնահատումը: Հողերի գնահատման նյութերը և փաստաթղթերը: Հողագնահատման աշխատանքների մեքենայացումը: Հողագնահատման աշխատանքները արտասահմանում: Հողա-գնահատման տվյալների կիրառման ոլորտները: Համայնքի հողային կադաստրը, մարզի հողային կադաստրը, հանրապետության հողային կադաստրը: Հողատեղեկատվական համակարգը: Հողային կադաստրը և հողաշինարարությունը: Հողային կադաստրը և հողերի մոնիթորինգը:

Հողաշինարարության գիտության սահմանումը, կառուցվածքը, նպատակը և խնդիրները: Հողաշինարարական նախագծումը որպես հողաշինարարության անցկացման մեթոդաբանություն: Հողաշինարարական նախագծի տեսակները: Հողային և ագրարային հարաբերությունները արդի պայմաններում: Միջտեսակային հողաշինարարություն: Միջհամայնքային հողաշինարարական նախագծերի կազմումը, նպատակը և խնդիրները: Հանրապետության հողային ֆոնդը ըստ նպատակային նշանակության: Հանրապետության հողային հաշվեկշիռը: Միջտնտեսական հողաշինարարական նախագծերի բովանդակությունը, կազմը և կառուցվածքը՝ կապված ջրամբարների շինարարության արդյունքում նրանց ազդեցության գոտում հայտնված հողօգտագործողների վերակազմավորման հետ: Միջտնտեսական հողաշինարարական նախագծերով տնտեսությունների սահմանների ճշգրտման, վերականգնման և անցկացման գործողությունների հաջորդականությունը: Խախտված հողերի վերականգնման նախագծի կազմումը, հողավիճակի հողատարածքների խոշորացման և արդյունավետ հողօգտագործման կազմակերպման սկզբունքները: Հողօգտագործման թերությունները և նրանց վերացման ուղիները: Ներհամայնքային հողաշինարարական նախագծերի կազմման նպատակը, խնդիրները: Ներհամայնքային ճանապարհային ցանցի տեղաբաշխումը և նախագծումը, ճանապարհի ծանրաբեռնվածությունը, ծածկույթը, լայնական պարամետրերի սահմանումը, երկայնական պրոֆիլների կազմումը, հողա-

յին աշխատանքների ծավալների հաշվարկը: Ճարտարագիտական, մե-
լիորատիվ և ջրատնտեսական տարբեր նշանակության կառուցվածքների
տեղաբաշխումը: Ոռոգման ցանցի նախագծումը և նրա լծորդումը հողօգ-
տագործման պարամետրերի հետ: Բանվորական նախագծեր: ՀՀ հողա-
յին ֆոնդի վերլուծությունը: Վարլահողերի հողաշինարարական կազմա-
կերպումը, ցանքաշրջանառության սխեմաների կազմումը: Դաշտա-
պաշտպան անտառաշերտերը և նրանց տեղաբաշխումը: Կուլտուր-տեխ-
նիկական աշխատանքների բովանդակությունը: Քարքարոտ հողերի յու-
րացում, քարքարոտ հողերի յուրացման դիֆերենցիալ տեխնոլոգիան:
Բազմամյա տնկարկների տարածքի հողաշինարարական կազմակերպու-
մը, արոտավայրերի մակերեսային և արմատական բարելավում, մշակովի
արոտային տարածքի կազմակերպումը: Արոտավայրերի ջրարբիացում:
Հակաէրոզիոն միջոցառումների դասակարգումը, թեք լանջերի դարավան-
դումը, հաշվարկը և նախագծումը հատակագծում: Հակաձորակային միջո-
ցառումներ: Հողերի հարթագծումը թեք կամ հորիզոնական հարթության
տակ: Ոռոգելի հողերի հարթագծում: Նախագծի տեղափոխումը բնության
մեջ: Հողաշինարարական նախագծերի տնտեսական, սոցիալական և էկո-
լոգիական արդյունավետության հիմնավորումը:

14.

Քույսերի պաշտպանություն 4 կրեդիտ, 120 ժամ

Միջատների մորֆոլոգիան, անատոմիան և ֆիզիոլոգիան, միջատների
պոպուլյացիաների (միջտեսակային, ներտեսակային և ներպոպուլյա-
ցիոն), միջատների բազմացումը և զարգացումը, միջատների էկոլոգիան,
նրանց դասակարգումը, գ/տ մշակաբույսերի վնասատուների կենսաբա-
նական առանձնահատկությունները, հասցրած վնասի բնույթը և չափերը,
պայքարի մեթոդները և բույսերի պաշտպանության համակարգ վնասա-
տուների դեմ:

Քույսերի հիվանդությունների դասակարգումը: Ոչ վարակիչ հիվանդու-
թյուններ: Վարակիչ հիվանդությունների գլխավոր խմբերը (վիրուսներ,
բակտերիաներ, միկրոպլազմաներ, ճառագայթասնկեր, սնկեր), բույսերի
ինֆեկցիոն հիվանդությունների էկոլոգիան և զարգացման դինամիկան, հի-
վանդությունների կանխատեսում և ահազանգում, գ/տ մշակաբույսերի
հիվանդությունները, հարուցիչների կենսաբանական առանձնահատկու-
թյունները, հասցրած վնասի բնույթը և չափերը բույսերի պաշտպանության
համակարգ գ/տ մշակաբույսերի հիվանդության դեմ: Լաբորատոր պա-
րապմունքներ:

15.

Անասնաբուժական արտադրանքի արտադրության տեխնոլոգիա

4 կրեդիտ, 120 ժամ

Անասնապահությունը որպես ժողովրդական տնտեսության առաջատար
ճյուղ, վարման համակարգը, նախապայմանները և հիմնախնդիրները:
Ռեզիդուալ անասնապահության կողմնորոշիչները:

Գյուղատնտեսական կենդանիների տնտեսական հատկանիշները, ցեղա-
զոյացման գործոնները, ցեղերի դասակարգումը և կատարելագործման ու
շրջայնացման խնդիրները:

Կենդանիների համակազմվածքը, աճի ու զարգացման օրինաչափություն-
ները, հաշվառման մեթոդները: Նախիրների և հոտերի սերնդատվությունը,
վերարտադրությունը և մթերատվությունը:

16

**Անասնաբուժական մթերքների վերամշակման և պահպանման տեխնոլո-
գիա 3 կրեդիտ, 90 ժամ**

Կաթի և կաթնամթերքների սննդային և կենսաբանական արժեքները: Կա-
թի կազմը, ֆիզիկական և քիմիական հատկությունները: Կաթի նախնա-

կան մշակումը տնտեսություններում: Անարատ կաթնամթերքների, պաղպաղակի, պանիրների, կարագի և կաթնային պահածոների արտադրության տեխնոլոգիաները:

Մսի քիմիական կազմը: Անասունների մորթի տեխնոլոգիան: Մսի նախնական մշակումը: Երշիկների, ապուխտների, կիսաֆարրիկատների և մսային պահածոների արտադրության տեխնոլոգիաները: Չվի կազմը, նրանից պատրաստված սառեցված և չորացված ձվամթերքների արտադրության տեխնոլոգիան:

Կաշիների ստացման տեխնոլոգիան: Կաշիների դասակարգումը: Կաշիների ներկման գործընթացները: Կաշիների դաբաղումը, պիկելումը: Թավշակաշվի և մորթիների ստացման արտադրական գործընթացները:

17. **Բուսաբուծական մթերքների վերամշակման և պահպանման տեխնոլոգիա**
4 կրեդիտ, 120 ժամ

Որպես վերամշակման օբյեկտ բուսական հումքի բնութագիրը և որակի գնահատումը, հացահատիկի, լոբազգիների, յուղատու մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի, մրգերի և հատապտուղների, շաքարի ճակնդեղի և ծխախոտի նախապատրաստման և վերամշակման սկզբունքները, մեթոդներն ու գործընթացները, դրանց էությունը և արտադրության տարբեր ոլորտներում կիրառման առանձնահատկությունները:

Բուսաբուծական արտադրանքի պահպանության սկզբունքները, մեթոդներն ու եղանակները, հացահատիկի, լոբազգիների, յուղատու մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի, մրգերի և հատապտուղների, շաքարի ճակնդեղի և ծխախոտի պահպանության տեխնոլոգիաները:

Հացահատիկի, լոբազգիների, յուղատու մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի, մրգերի և հատապտուղների, շաքարի ճակնդեղի և ծխախոտի վերամշակման տեխնոլոգիաները, պահածոյացման և գինեգործության հիմունքները, կոմբինացված կերերի արտադրություն:

18. **Ինֆորմատիկա** 4 կրեդիտ, 120 ժամ

Գասընթացի առարկան, խնդիրները, ինֆորմատիկայի դերը, համակարգիչների տեսական հիմունքները:

Համակարգիչների ստեղծման ու զարգացման փուլերը: Ֆունկցիոնալ սարքերի տրամաբանական ֆունկցիաները, սարքի տրամաբանական սխեման: Տրամաբանական դիզայնի, կոնյուկցիա և բացասում գործողությունները:

Համակարգիչների տեխնիկական ապահովումը, ներքին և արտաքին սարքեր, պրոցեսոր:

Ինֆորմատիկայի մուտքագրման, ելքավորման և հաղորդման սարքեր:

Համակարգային ծրագրեր՝ օպերացիոն համակարգեր, ծրագրեր, քաղանթներ, դրայվերներ և ուտիլիտներ: Գործիքային ծրագրային ապահովումը որպես ծրագրավորման համակարգ, ծրագրավորման լեզվի և միջավայրի համակարգը և ստանդարտ գործառնությունների գրադարանը:

Ալգորիթմացում: Ալգորիթմացումը, խնդիրների լուծման ալգորիթմների կառուցման մեթոդները: Ալգորիթմի հատկությունները:

Հաշվողական գործընթացների տեսակները, ալգորիթմի նկարագրման եղանակները, ալգորիթմի որակի որոշման եղանակները, ալգորիթմի մշակման փուլերը և կարգը:

Ծրագրավորում: Ծրագրավորումը որպես ինֆորմատիկայի ճյուղ, ծրագրեր կազմելու մեթոդներն ու ձևերը: Ծրագրավորման լեզուների դասակարգումը, ծրագրերի մշակումը և կատարման փուլերը:

Համակարգչային համակարգեր և ցանցեր: Համակարգչային ցանցերը և

դրանց տիպերը:

19.

Վիճակագրություն 9 կրեդիտ, 270 ժամ

Ծրագրում զետեղվել են այն հիմնական հարցերը, որոնք վերաբերում են ժամանակակից վիճակագրության հիմունքներին: Նրա առաջին մասում արտացոլված են «Վիճակագրության ընդհանուր տեսության», իսկ երկրորդ մասում՝ «Սոցիալ տնտեսական վիճակագրության» հիմունքները:

«Վիճակագրության ընդհանուր տեսության» մեջ տրվում է գիտության առարկայի սահմանումը, մեթոդը, խնդիրները, ուսումնասիրվում է վիճակագրական տվյալների դիտարկման, ամփոփման և խմբավորման մեթոդաբանությունը, միջին մեծություններն ու վարիացիայի ցուցանիշները, փոխկապակցությունները, սոցիալ-տնտեսական երևույթների դինամիկան:

«Սոցիալ տնտեսական վիճակագրության» մեջ առանձնակի ուշադրության են արժանացել գների, ֆինանսների, պետ բյուջեի և բանկերի, սպահովագրության, վարկի և դրամաշրջանառության, արտադրության և շրջանառության ծախքերի վիճակագրության, ազգային հաշիվների համակարգի, մակրոտնտեսական ցուցանիշների վիճակագրության, վճարային և առևտրային հաշվեկշիռների, սպրանքաշրջանառության (մեծածախ, մանրածախ, համախառն և զուտ) վիճակագրության ցուցանիշներին վերաբերող բաժինները: Ժողովրդագրության, բնակչության, աշխատաշուկայի տնտեսության առանձին ճյուղերի արտադրանքի, մասանավորապես գյուղատնտեսության արտադրանքի հաշվառման, բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերի արտադրանքների, միջազգային համադրումների, աշխատանքի, աշխատավարձի և արտադրողականության, բնակչության կենսամակարդակի :

20.

Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ և համակարգեր 4 կրեդիտ, 120 ժամ

Դասընթացի բովանդակությունը և խնդիրները:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաները որպես հաշվիչ տեխնիկայի միջոցների, կապի, ինֆորմացիայի պահպանման և արտապատկերման միջոցներ: Տնտեսագիտական ինֆորմացիան, նրա դերը, դասակարգումը, ինֆորմացիայի ֆիզիկական ու տրամաբանական կառուցվածքները, քանակական բնութագրերը: Ինֆորմացիայի հավաքագրման, գրանցման, նախապատրաստման և մշակման տեխնոլոգիական գործընթացի նախագծումը: Ինֆորմացիայի ավտոմատ մշակման համակարգի նախագծման մեթոդիկան ու կազմակերպումը: Խնդիրների ալգորիթմացում, համակարգերի մաթեմատիկական, ծրագրային և տեխնիկական սպահովում, կիրառական ծրագրերի փաթեթներ: Տվյալների բանկեր և բազաներ: Տվյալների ինտեգրացված մշակումը և պահպանումը:

Տվյալների բազաների հառավարման համակարգեր: Ինֆորմացիայի ավտոմատ մշակումն ու կառավարման գործառնությունները: Օպերատիվ կառավարման ինֆորմացիայի մշակման ավտոմատացումը: Կոմերցիոն ցանցի կիրառումը: «Բանկ-կլիենտ» համակարգը: Կառավարման տակտիկական և ռազմավարական խնդիրների

ինֆորմացիայի ավտոմատ մշակումը: Ինֆորմացիոն համակարգերն ու ավտոմատացված աշխատատեղերը: Բազմաֆունկցիոնալ ծրագրային կոմպլեքսները որպես ինտեգրացված ինֆորմացիոն համակարգի ստեղծված հիմք: Ցանցային տեխնոլոգիաներ: Համակարգչային ցանցեր, ինֆորմացիոն տեխնոլոգիաների առանձնահատկությունները: Լոկալ համակարգչային ցանցեր, գլոբալ ցանցեր: Ինֆորմացիայի պաշտպանությունը

ինֆորմացիոն համակարգում: Ինֆորմացիայի պաշտպանման միջոցներն ու եղանակները:

21.

Տեխնիկական գրավոր խոսք 2 կրեդիտ, 60 ժամ

Խոսքի կուլտուրայի հիմքերն ու բաղկացուցիչները. ոճաբանություն և ճարտասանական արվեստի հիմունքները:

Ժամանակակից հայերենում ոճի հիմնական տեսակների բնութագրումը. գործառնական, իրադրական և անհատական ոճեր:

Գործառնական ոճեր:

Առօրյա խոսակցական ոճի ընդհանուր բնութագիրը: Գրական լեզվի ներկա վիճակի և նրա հետագա զարգացման ընթացքի առումով առօրյա խոսակցական ոճի ազդեցության դրական և բացասական միտումները: Ժամանակակից հայոց գրական լեզվի անադարտության պահպանման հիմնական խնդիրները:

Գիտական ոճի ընդհանուր բնութագիրը: Գիտական և կրթական-ուսումնական ոլորտների գործունեության լեզվական-խոսքային չափանիշները:

Վարչագործարարական ոճի ընդհանուր բնութագիրը: Վարչատնտեսական, օրենսդիր, օրինաստեղծ և պետական կառավարման, ինչպես նաև քաղաքական, միջազգային, դիվանագիտական ոլորտներում կիրառվող լեզվական-խոսքային չափանիշների առանձնահատկությունները: Այդ ոլորտներին վերաբերող փաստաթղթերի կազմման և դրանց համակարգման հիմնական սկզբունքները: Գովազդային տեքստերի ձևավորման և դրանց մատուցման հիմնական եղանակները:

Հրատարակատեսակական ոճի ընդհանուր բնութագիրը: Հուզական-հոգեբանական ներգործության և փաստարկվածության ու տրամաբանական մոտեցումների համադրումը որպես այդ ոճի գործառության հիմնական սկզբունք:-

Գեղարվեստական ոճի ընդհանուր բնութագիրը: Այդ ոճի հիմնական չափանիշների պարզաբանումը հայ և համաշխարհային գրական մեծագույն արժեքների օրինակով:

Ճարտասանական արվեստի պատմության և հիմնական սկզբունքների համառոտ ակնարկ:

Ճարտասանական արվեստի կազմախոսական-բնախոսական հիմքերը. ձայնի դրվածքը, շնչառության տեխնիկան, հնչյունի ձևավորման և արտաբերման տեխնիկան ու կուլտուրան: Խոսքի կազմակերպման հոգեբանակն, հուզական և տրամաբանակն մեխանիզմները:

22.

Տնտեսա-մաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում

4 կրեդիտ, 120 ժամ

Ներածություն, դասընթացի առարկան, խնդիրները և նպատակը: մոդելավորման հիմնական ուղղությունները: Գծային ծրագրավորման հիմնական խնդիրը (ԳԾԽ), նրա ստանդարտ և կանոնական ձևերը: Գծային ծրագրավորմանը բերվող խնդիրների օրինակներ: ԳԾԽ-ի լուծման երկրաչափական և սիմպլեքս եղանակները: Երկակի խնդիրների կազմումը, նրանց տնտեսագիտական մեկնաբանությունները: Գծային ծրագրավորման տրանսպորտային խնդրի ձևակերպումը և լուծման մեթոդները: Ոչ գծային

ծրագրավորման խնդիրների օրինակներ: Արտադրական ֆունկցիաներ, նրանց տեսակները: Էկոնոմիկո-մաթեմատիկական մոդելների դասակարգումը, օպտիմալության չափանիշի ընտրությունը, փոփոականների և սահմանափակումների համակարգը: Էկոնոմիկո-մաթեմատիկական մոդելավորումը անասնաբուծության մեջ: Կերային ռացիոնի, հոտի օպտիմալ կազմի որոշման, կերերի օպտիմալ օգտագործման խնդիրների մոդելավորումը: Տնտեսագիտական պրոցեսների մոդելավորումը բուսաբուծության մեջ: Ցանքատարածությունների օպտիմալ կառուցվածքի, ցանքաշրջանառության օպտիմալ տարբերակի որոշման խնդիրների մաթեմատիկական մոդելների մշակումը: Արտադրության օպտիմալ մասնագիտացման և տեղաբաշխման խնդրի մոդելավորումը: Մեքենա-տրակտորային հավաքակալանի օպտիմալ կազմի որոշման, օպտիմալ համալրման և օպտիմալ օգտագործման խնդիրների առանձնահատկությունները և մոդելավորումը:

ԸՄԴ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ

1. Անասնաբուծական գործի կազմակերպում 4 կրեդիտ, 120 ժամ

Ներածություն, Առարկային նշանակությունը, նրա սոցիալ-տնտեսական և պաշտպանական նշանակությունը, անասնաբուծական ծառայության խնդիրները: Անասնաբուծական ծառայության հիմունքները: Անասնաբուծական հարցերի օրենսդրությունը. ՀՀ օրենքը «Անասնաբուծության» մասին: ՀՀ անասնաբուծական ծառայության կառուցվածքը: Անասնաբուծական գործի կազմակերպումը մարզերում, քաղաքներում և տնտեսություններում: Անասնաբուծական միջոցառումների ծրագրավորումը, նրա տեսակները: Անասնաբուծական միջոցառումների կազմակերպումը: Անասնաբուծասանիտարական հսկողության հիմունքները: Անասնաբուծասանիտարական հսկողության կազմակերպումը անաս-նապահական տնտեսություններում: Անասնաբուծասանիտարական հսկողությունը տրանսպորտում և պետական սահմանում: Անասնաբուծասանիտարական հսկողության կազմակերպումը մսի վերամշակման ձեռնարկություններում և հումքի արդյունաբերությունում: Անասնաբուծական միջոցառումների ֆինանսավորումը: Անասնաբուծական հաշվառում և հաշվետվություն: Անասնաբուծական գործավարություն: Միջազգային անասնաբուծական կազմակերպություններ: Անասնաբուծական միջոցառումների էկոնոմիկան:

2. Հաշվապահական հաշվառում և աուդիտ 4 կրեդիտ, 120 ժամ

Հաշվապահական հաշվառման դասընթացի առարկան, մեթոդը, մեթոդի տարրերը և դրանց փոխադարձ կապը: Հաշվապահական տեղեկատվությանը ներկայացվող պահանջները, տեղեկատվության օգտագործողները: Հաշվապահական հաշվետվություններ, կազմման և ներկայացման կարգը գյուղատնտեսական ձեռնարկություններում:

Հաշվեկշռի էությունը, կառուցվածքը, հաշվեկշռային նույնություն, բովանդակությունը:

Հաշիվների էությունը, գրանցումների կարգը, կրկնակի գրանցման մեթոդի գործառույթները:

Աուդիտի էությունը, սկզբունքները և կազմակերպման ընթացակարգերը: Աուդիտի տեսակները և անցկացման փուլերը:

Ոչ ընթացիկ ակտիվների դասակարգումը, գնահատումը, մաշվածքի

հաշվարկումը, օտարման հաշվառումը: Ոչ ընթացիկ ակտիվների աուդիտի կազմակերպումը:

Ընթացիկ ակտիվների դասակարգումը գյուղատնտեսական ձեռնարկություններում: Ընթացիկ ակտիվների աուդիտի կազմակերպումը:

Պաշարների հաշվառման սկզբունքները և մնացորդի գնահատման մեթոդները համաձայն ՀՀՀՄ-2 ստանդարտի: Պաշարների աուդիտի կազմակերպումը:

Դրամական միջոցների, դեբիտորական պարտքերի հաշվառման հիմնահարցերը գյուղատնտեսական ձեռնարկություններում: Դրամական միջոցների աուդիտի կազմակերպումը:

Կապիտալի, պահուստների հաշվառման սկզբունքները գյուղատնտեսական ձեռնարկություններում:

Հիմնական արտադրության ծախսումների հաշվառման սկզբունքները, դասակարգումը ուղղակի և անուղղակի, հաստատուն և փոփոխական ծախսեր: Անուղղակի ծախսերի բաշխումը, ծախսերի կլանումը: Պատրաստի արտադրանքի հաշվառման սկզբունքները:

Իրացում, իրացումից ստացված ֆինանսական հետևանքների որոշումը: Ֆինանսական հաշվետվությունների ձևերը և աուդիտի կազմակերպումը:

3.

ԱԱՀ էկոնոմիկա 5 կրեդիտ, 150 ժամ

Տնտեսական օրենքների դրսևորման բնույթը գյուղատնտեսության մեջ: Գյուղատնտեսության արտադրական ռեսուրսների (հողի, ջրի, կապիտալի, աշխատանքի) գնահատման, պահանջի և տնտեսական արդյունավետության որոշման մեթոդաբանությունը, ցուցանիշները: Կապիտալի պտույտը և շրջապտույտի փուլերի գնահատումը:

Կապիտալ ներդրումների պահանջի և ներդրման արդյունավետության գնահատումը, նվազագույն ռեսուրսների և տարբերակների ընտրությունը:

Գյուղատնտեսության ընդլայնված վերարտադրությունը՝ առանձնահատկությունները, աղբյուրները, ցուցանիշները, տիպերը: Ինտենսիվացումը որպես վերարտադրության ձև՝ ներկա փուլի առանձնահատկությունները: Ինտենսիվության և ինտենսիվացման տնտեսական արդյունավետության որոշման մեթոդիկան, ցուցանիշների համակարգը:

Գյուղատնտեսության համախառն և ապրանքային արտադրանքը, վերջնական արդյունքը: Համախառն արդյունքի բաշխումը: Պարենային ազգային անվտանգություն:

Արտադրության տնտեսական արդյունավետության էությունը, մակարդակները, ցուցանիշները, կանոնական և իրական տնտեսության պայմաններում: Ինքնարժեք՝ տեսակների հաշվարկման մեթոդաբանությունը, արտերկրների փորձը, իջեցման հիմ-նախնդիրները: Աշխատանքի արտադրողականության հաշվարկման մեթոդաբանությունը, մակարդակը, դինամիկան և ցուցանիշները: Ռեսուրսների ամբողջական արտադրողականություն: «Նվազող հատույց» և «Մահմանային օգտակարություն»: Համախառն և զուտ եկամուտ, շահույթ, եկամտաբերություն և շահութաբերություն: Ռեսուրսների ամբողջական արդյունավետություն:

Արտադրողական ուժերի և արտադրանքների տեղաբաշխման և մասնագիտացման գիտական հիմունքները, ցուցանիշների համակարգը գյուղատնտեսության մեջ: Կենտրոնացում, համակենտրոնացում և ագրոարդյունաբերական ինտեգրացիա: Տարածաշրջանների էկոնոմիկա:

Գնագոյացումը և ագրարային շուկայի գների համակարգը: Բուսաբուծական և անասնաբուծական առանձին ճյուղերի էկոնոմիկան: SWOT վեր-

լուծություն:

4.

Մարքեթինգ 4 կրեդիտ, 120 ժամ

Մարքեթինգի մուտքը ՀՀ: Առանձնահատկությունները և առաքելությունները, հիմնադրույթները, սկզբունքները, ռազմավարությունն ու մարտավարությունը, տեսակետները, ծրագրերը, կազմակերպման սկզբունքները:

Մարքեթինգի շրջակա միջավայրը, գործոնների դասակարգումը, մակրոմիջավայրի /չվերահսկվող/ միկրոմիջավայրի /վերահսկվող/ գործոնները: Ուժեղ և թույլ կողմերը:

Մարքեթինգի հետազոտության համակարգը: Սպառողների ապրանքների, ապրանքային շուկաների, մրցակցության, մատակարարների, առևտրային միջնորդների, տեղեկատվության համակարգերի ուսումնասիրություն:

Սպառողական շուկաներ և գնորդների գնային ուսումնասիրությունը: Սպառողների սպառման վարքի «Սև արկղ»: Մարքեթինգի դրդիչ գործոնները և սպառողների պատասխան ռեակցիան: Սպառողների բնութագիրը և գնումների գործընթացը:

Շուկայի հատվածավորման էությունը, սկզբունքները, չափանիշները: Շուկայի հատվածի բնութագրիչները: Նպատակային հատվածի գրավման ալգորիթմը:

Ապրանքը մարքեթինգի համակարգում: Էությունը, մակարդակները, կենսացիկլերը, ներկայացումը շուկայում: Ապրանք-նորույթ:

Գները և գնագոյացումը մարքեթինգի համակարգում: Մարքեթինգային գների համակարգը: ՀՀ շուկայում գործող գների համակարգը, մակարդակը և դինամիկան: Գյուղատնտեսական արտադրանքի և գյուղին վաճառվող արտադրամիջոցների գների համարժեքությունը:

Մարքեթինգի կազմակերպման սկզբունքները: Մարքեթինգը տարբեր ոլորտներում: Ագրոմարքեթինգ և քոնսալթինգ: Ֆինանսական մարքեթինգ, մարքեթինգը մտավոր կապիտալի շուկայում, կապիտալ շինարարության օբյեկտների մարքեթինգ, ապահովագրական և արտերկրների հետ համատեղ ձեռնարկությունների մարքեթինգ: Միջազգային մարքեթինգ:

Ագրարային շուկաներ: Էությունը, տեղը, դերը, առանձնահատկությունները, պաշտպանվածությունը, ապրանքային և ֆինանսական կառուցվածքը: Գների համակարգը: Պահանջարկը և առաջարկը: Ներմուծում և արտահանում:

5.

Ագրոբիզնեսի հիմունքներ 3 կրեդիտ, 90 ժամ

Ագրոբիզնեսի էությունը, առարկան, տեղը մյուս տնտեսագիտական գիտությունների համակարգում, ուսումնասիրության մեթոդները, եղանակները և խնդիրները: Ագրոբիզնեսի համակարգը և ագրարային քաղաքականության առաջնային ուղղությունները:

Գյուղատնտեսության աջակցության բնութագիրը: Ագրարային հատվածի զարգացմանն ու ագրոբիզնեսին աջակցող ծրագրերը: Ագրոբիզնեսի կազմակերպմանն աջակցող կառույցներն ու մարմինները: Տեղատվություն և խորհրդատվության ապահովումը որպես ագրոգործարարության կազմակերպմանն ու աջակցության կարևոր գործոն: Բիզնես պլանը որպես ագրոբիզնեսի արդյունավետ կազմակերպման առաջնահերթ պայման:

Ագրարային շուկայի ձևավորումը և կոմերցիոն գործունեության կազմակերպումը: Բիզնեսի կազմակերպման հիմունքները բուսաբուծության, անասնաբուծության ճյուղերում և վերամշակման ձեռնարկություններում:

6.

Գյուղ. ապահովագրություն 4 կրեդիտ, 120 ժամ

Ապահովագրության էությունն ու գործառույթների առանձնահատկությունը ապահովագրական պաշտպանվածության գծով: Ապահովագրական գործի պատմությունը: Հայաստանի ապահովագրական շուկայի զարգացման հիմնական փուլերը և երկրի տնտեսական զարգացման կարևորագույն նշանակությունը: Ապահովագրության իրականացման կանոնակարգման հիմնական սկզբունքները: Պարտադիր և կամավոր ապահովագրության իրականացման հիմնական սկզբունքները: Պետությունը և ապահովագրությունը Ապահովագրական գործի կազմակերպման հիմնական սկզբունքները: Ապահովագրական շուկայի հիմնական մասնակիցները և նրանց բնութագիրը: Ապահովագրական շուկայի մասնակիցների փոխհարաբերությունները: Ապահովագրության հիմնական տեսակներն ու օբյեկտները: Ապահովագրության տեսակների դասկարգման հիմնական սկզբունքները և դրանց առանձնահատկությունները: Ապահովագրական ռիսկի, կորուստի և ապահովագրական հատուցման էությունը: Ռիսկային իրադրություն և ապահովագրական պատահար: Ապահովագրական ռիսկերի տեսակներն ու դրանց կառավարումը: Անձնական, գույքային և պատասխանատվության ապահովագրության տեսակներն կազմակերպումը: Գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների ապահովագրություն: Գյուղատնտեսական կենդանիների ապահովագրություն: Ապահովագրական դրույքի (սակագնի) կառուցվածքը և հաշվարկման հիմնական եղանակները: Անձնական և գույքային ապահովագրության դրույքի (սակագնի) հաշվարկման մեթոդներն ու դրանց առանձնահատկությունները: Ապահովագրական պահուստների էությունը և հիմնական տեսակները: Վերաապահովագրության էությունն ու դրա գործառույթների առանձնահատկությունը: Վերաապահովագրական շուկայի զարգացման հիմնական փուլերը: Ապահովագրական կազմակերպության կառուցվածքը: Ապահովագրական կազմակերպության տեսակները:

7.

Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում 4 կրեդիտ, 120 ժամ

Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման և կառավարման գիտական հիմունքները, սկզբունքներն ու օրինաչափությունները:

Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման և կառավարման առանձնահատկությունները:

Գյուղատնտեսական ձեռնարկությունների (տնտեսավարման առկա բոլոր ձևերի) կազմակերպատնտեսական հիմունքները:

Ռեսուրսային ներուժի (հողի, արտադրամիջոցների, աշխատուժի) ձևավորումը և ռացիոնալ օգտագործման կազմակերպումը և կառավարումը:

Գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրության (տնտեսության վարման համակարգ, ներտնտեսային կանխատեսում և պլանավորում, մասնագիտացում, ճյուղերի ռացիոնալ զուգակցում, արտադրության համակենտրոնացում, ձեռնարկությունների և ստորաբաժանումների չափեր, տնտեսական հաշվարկ շուկայի պայմաններում և աշխատողների նյութական խթանում) ռացիոնալ կազմակերպումը և կառավարումը:

Բուսաբուծական ու անասնաբուծական ճյուղերի և օժանդակ արդյունաբերական արտադրության կազմակերպումը և կառավարումը:

Գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրատրն-տեսական կապերն ագրոպարենային համակարգի մյուս ոլորտի (գյուղատնտեսական հումք վերամշակող, նյութատեխնիկական միջոցներ ապահովող,

սպասարկումներ կազմակերպող) ձեռնարկությունների (կազմակերպությունների) հետ: Գյուղատնտեսական արտադրանքի պահպանման, վերամշակման և իրացման կազմակերպումը:

Կառավարման տեսության հիմնական կատեգորիաները: Կառավարման դասական դպրոցները և կառավարչական մտքի զարգացման փուլերը:

Գյուղատնտեսական մթերքներ արտադրող կազմակերպությունների տեսակները: Կազմակերպությունների արտաքին և ներքին միջավայրերի բնութագրումը:

Կառավարման գործընթացը և գործառույթները: Կառավարման մեթոդները և դրանց կիրառումը ՀՀ ագրոպարենային համակարգի կազմակերպություններում:

Կոմունիկացիաների նշանակությունը կառավարման գործընթացում: Կառավարչական որոշումները և դրանց ընդունման գործընթացը:

Հանրային կառավարման էությունը, գործառույթները և կազմակերպումը:

Խմբերի կառավարումը: Իշխանությունը և առաջնորդումը: Ղեկավարման ոճերը: Կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսի կառավարումը:

Արտադրության կառավարումը և օպերատիվ կառավարման էությունն ու խնդիրները:

Պաշարների կառավարումը: Որակի կառավարումը:

Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման և կառավարման արդյունավետությունը և դրա բարձրացման հիմնական ուղիները:

Անձնակազմի հասկացությունը, կառուցվածքը և կառավարման փուլերը:

Նորամուծությունների կառավարումը: Ներդրումների ռիսկի կառավարման խնդիրները: Ներդրումների ռազմավարական կառավարումը:

8. **Ֆինանսներ, դրամաշրջանառություն, վարկեր** 4 կրեդիտ, 120 ժամ

Գյուղատնտեսական ձեռնարկությունների (կազմակերպությունների) ֆինանսները որպես պետության ֆինանսական համակարգի հիմք: Գյուղատնտեսական ձեռնարկությունների ֆինանսական արդյունքների ձևավորումը և բաշխումը: Ձեռնարկությունների ընթացիկ ակտիվների (շրջանառու միջոցների) ձևավորման և օգտագործման ֆինանսական հիմնախնդիրներն արդի պայմաններում, դրանց գործունեության ֆինանսական վերլուծությունը և ռազմավարությունը, գործարարության (քիզնես) սլան կազմելու ֆինանսական կողմերը: Գյուղատնտեսական ձեռնարկությունների սնանկացման (անվճարունակության) ֆինանսական հիմնահարցերը: Վարկի էությունը և անհրաժեշտությունը արդի պայմաններում, վարկի սկզբունքները, ֆունկցիաները, ձևերը և տեսակները: Ագրարային ոլորտի սեզոնային վարկավորման կազմակերպումը: Վարկի սահմանների որոշումը շուկայական տնտեսության պայմաններում: Փոխատվական կապիտալը, փոխատվական տոկոսը և դրա տնտեսական նշանակությունը: Վարկային համակարգի բնութագրերը և գնահատումը: Բանկերի ծագումը, էությունը և գործառույթները:

9.

**Ազրոպարենային համակարգի զարգացման կանխատեսում և
պլանավորում 4 կրեդիտ, 120 ժամ**

Առարկայի ուսումնասիրությունն իրականացվում է հետևյալ հիմնական թեմաների գծով՝

- *առարկայի էությունը և խնդիրները,*
- *ազրոպարենային համակարգի ռազմավարության պլանավորման մեթոդաբանական հիմունքները,*
- *ռազմավարության էությունը և ուղղությունները,*
- *ազրոպարենային համակարգի ռազմավարության պլանավորման հիմնական մեթոդները,*
- *սոցիալ-տնտեսական զարգացման պլանների համակարգը և դրանց կառուցվածքը,*
- *քիզնես-պլանի էությունը, կառուցվածքը և մշակման կարգը,*
- *գիտատեխնիկական առաջադիմության ռազմավարության պլանավորում,*
- *ԱԱՀ-ի ռեզիոնալ և մթերային ենթահամալիրների և գյուղատնտեսության վարման համակարգերի, ենթակառուցվածքների, վերամշակող արդյունաբերության ու առևտրի, փոխադրումների զարգացման ռազմավարություն և պլանավորում*
- *ներդրումների և սոցիալական զարգացման ռազմավարության պլանավորում*

Գնագոյացման և շահույթի գոյացման պետական կարգավորումը:

10.

ԱՊՀ կազմակերպությունների կառավարում 4 կրեդիտ 120 ժամ

Դասընթացը կազմված է 26 թեմաներից, որոնք խմբավորված են հետևյալ բաժիններում՝

- *գյուղատնտեսական արտադրության կազմակերպման գիտական հիմունքները, սկզբունքներն ու օրինաչափությունները,*
- *գյուղատնտեսական ձեռնարկությունների /տնտեսավարման առկա բոլոր ձևերի/ կազմակերպատնտեսական հիմունքները,*
- *ռեսուրսային ներուժի /հողի, արտադրամիջոցների, աշխատուժի/ ձևավորումը և ռացիոնալ օգտագործման կազմակերպումը,*
- *գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրության /տնտեսության վարման համակարգ, ներտնտեսային կանխատեսում և պլանավորում, մասնագիտացում, ճյուղերի ռացիոնալ զուգակցում, արտադրության համակենտրոնացում, ձեռնարկությունների և ստորաբաժանումների չափեր, տնտեսական հաշվարկ շուկայի պայմաններում և աշխատողների նյութական խթանում/ ռացիոնալ կազմակերպումը,*
- *բուսաբուծական ու անասնաբուծական ճյուղերի և օժանդակ արդյունաբերական արտադրության կազմակերպումը,*

գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրատնտեսական կապերն ազրոպարենային համակարգի մյուս ոլորտի /գյուղատնտեսական հումք վերամշակող, նյութատեխնիկական միջոցներ ապահովող, սպասարկումներ կազմակերպող/ ձեռնարկությունների /կազմակերպությունների/ հետ: Գյուղատնտեսական արտադրանքի պահպանման, վերամշակման և իրացման կազմակերպումը:

11.

Ազրարային քաղաքականություն 6 կրեդիտ, 180 ժամ

Գյուղական տարածաշրջանի զարգացման մասին գիտության կարծիքը և նրա դերը ու նշանակությունը տնտեսագիտության կառուցվածքում: Տարածաշրջանի տնտեսության զարգացման օբյեկտը, առարկան և խնդիրները, ուսումնասիրման մեթոդները:

Տարածաշրջանի տնտեսագիտական պոտենցիալի որոշումը, տարածքի պոտենցիալի կառուցվածքի և կազմի որոշումը, տնտեսագիտական պոտենցիալի և ազգային հարստության ու արտաքին ուժերի կապը, սոցիալ-տնտեսական պոտենցիալի սխեման, բնական ռեսուրսների պաշարը և նրա իրացման մեխանիզմը: Տարածաշրջանային սեփականության և տարածաշրջանի տնտեսվարման ու կառավարման տնտեսագիտական հիմնավորումը:

Հայաստանի ագրարային արտադրության կազմակերպումը, տարածաշրջանի շուկան, նրա կառուցվածքը, ձևավորման պայմանները, վերարտադրության գործընթացի կազմակերպումը, ֆինանսավորման համակարգը, համալիր զարգացման հիմնախնդիրները:

Ագրարային քաղաքականության ռազմավարության մշակման և նրա իրականացման մեխանիզմները: Արտաքին հարաբերությունը, նրանց բովանդակությունը, կարգավորման ու կառավարման հիմնական սկզբունքները:

12.

ՀԱՐԿԵՐ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

3 կրեդիտ, 90 ժամ

Բյուջետային համակարգը: Հարկերի տնտեսական էությունը: Հարկերի տարրերը և հարկատրաման սկզբունքները: Հարկային համակարգը: Պետության հարկային քաղաքականությունը: Շահութահարկ: Եկամտահարկ: Ավելացված արժեքի հարկ: Ակցիզային հարկ: Հաստատագրված վճարների մասին: Հողի հարկ: Պարզեցված հարկ: Տեղական տուրքեր և վճարներ: Պետական տուրք: Մաքսատուրք:

13.

Շուկայական տնտեսության պետական կարգավորում 3 կրեդիտ, 90 ժամ

Շուկայական տնտեսության պետական կարգավորում առարկան և խնդիրները: Շուկայական տնտեսության կարգավորման պետական մարմինները, դրանց գործառույթները: Պետության ճյուղային տնտեսական քաղաքականությունը: Ներդրումային քաղաքականություն: Արտաքին տնտեսական քաղաքականությունը և բաց տնտեսության զարգացման օրինաչափությունները: Բնակչության զբաղվածության ապահովման մակրոտնտեսական քաղաքականությունը: Գրամավարկային և արժույթային պետական քաղաքականությունը: Հարկաբյուջետային քաղաքականությունը և ֆինանսական կարգավորումը: Կապիտալի շուկայի պետական կարգավորման հարցերը շուկայական տնտեսությունում: Մենաշնորհային և հակամենաշնորհային քաղաքականություն: Պետական գույքի կառավարման հիմնահարցերը: Սոցիալական քաղաքականության պետական կարգավորումը:

ՄԳ

ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ

1.

Ագրարային խորհրդատվության պատմություն և մեթոդիկա

5 կրեդիտ, 120 ժամ

Ագրարային խորհրդատվության արդյունավետության բարձրացման ուղիները գյուղատնտեսությունում: ՀՀ-ում և արտերկրում գյուղատնտեսության զարգացման հասարակական պայմանները:

Հողային հարաբերությունները, որպես ագրարային հարաբերությունների բաղկացուցիչ մաս, հողերի սեփականաշնորհման գործընթացը, գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ և ֆերմերային տնտեսությունների ձևավորումը: Տեսական առաջին խոշոր մշակումները տեղեկատվական խորհրդատվական ծառայության դերի բացահայտման ուղղությամբ, շուկայական հարաբերությունները և խորհրդատվության ու տեղեկատվության դերը ու նշանակությունը:

Ագրարային խորհրդատվության դերը գյուղատնտեսական զարգացման, հողի, աշխատանքի, կապիտալի և այլ ռեսուրսների ավելացումը և դրանց արդյունավետ օգտագործումը:

Նոր տեխնոլոգիաների, աշխատանքային ռեսուրսների, տնտեսության վարման համակարգի, մասնագիտացման, գյուղատնտեսական հողօգտագործման տրանսֆորմացիայի, մարքեթինգի և արտաքին քաղաքականության հիմնախնդիրների ուսումնասիրումը:

Ագրարային խորհրդատվության պատմության զարգացման օրինաչափությունը ՀՀ-ում և նրա դերը գյուղատնտեսական արտադրության բարելավման գործում: «Ագրոգիտասփյուռ»-ի գործունեությունը ՀՀ-ում, նրա կառուցվածքը, կազմը նպատակը ու խնդիրները: «Ագրոգիտասփյուռ»-ի մեթոդիկական ագրարային նոր հարաբերությունների պայմաններում:

2. **Ագրարային խորհրդատվության գործի կազմակերպում**

9 կրեդիտ, 270 ժամ

Ագրարային խորհրդատվության գործի կազմակերպման սկզբունքները և նրա գործունեությունը գյուղատնտեսական արտադրության կամ ուսումնական հաստատության կառուցվածքում:

Ագրարային խորհրդատվության համապատասխան մոդելը, խորհրդատվական ծառայությունները, մասնավոր խորհրդատվական ծառայությունները, խորհրդատվական գործի կազմակերպման ձևերը: Ագրարային խորհրդատվական գործի կազմակերպումը ապրանքարտադրող և ֆերմերային կազմակերպությունների միավորման հիման վրա:

Ագրարային խորհրդատվական ծառայության գործունեության զանգվածային մեթոդները, անհատական քննարկումները, խմբակային /փնային/ քննարկումները, դաշտային օրեր, սեմինարներ, այցելություններ ֆերմերային տնտեսություններ և ապրանք արտադրող կազմակերպություններ:

3. **Գյուղ. աջակցության ծառայության կազմակերպում և կառավարում**

4 կրեդիտ, 120 ժամ

Գյուղաջակցության ծառայության կազմակերպման և կառավարման հիմնախնդրի լուծման մեթոդները:

Ֆունկցիոնալ չափանիշը, տարածքային չափանիշներ, ցուցաբերված ծառայություններից, մատրիցային մոտեցում, խառը մոտեցում:

Ըստ ֆունկցիոնալ չափանիշների տրվելու է առանձին աշխատանքների գնահատականը: Տարածքային չափանիշներով կազմվում են տարածաշրջանային կամ միջմարզային խորհրդատվական խմբեր, աջակցության ամբողջ ոլորտը կառավարվում է մեկ ղեկավարի կողմից: Ուսումնասիրվելու է գյուղաջակցության ծառայության կազմակերպումը և կառավարումը կախված ցուցաբերված ծառայություններից կամ մատրիցային մոտեցմամբ, որտեղ առաջարկվում է վարչարարական կառավարում առանձին ծրագրերի, որը և ձևավորում է մատրիցան:

Կառավարման հասկացությունը, ղեկավարի և ենթակայի անձնական բնութագրերը, աշխատանքային բնութագրերը, գործունեք, որոնք կապ են հաստատում միջավայրի և ղեկավարի միջև:

4. **Խորհրդատվական ծրագրեր և հետադարձ կապ 8 կրեդիտ, 256 ժամ**

Առարկայի նպատակն է գործնական եղանակներով ուսումնասիրել և ուսուցանել տեսական խորհրդատվական, տեղեկատվական գործունեությունը Ագրարային համակարգում:

Ուսուցման ընթացքում տրվում է պատկերացում թե, ինչ են իրենցից ներկայացնում տեղեկատվական և խորհրդատվական ծրագրերը, այդ ծրագրերի բովանդակությունը, շեշտվում է խորհրդատվական ծրագրերի անհրաժեշտությունը ու կարևորությունը ֆերմերային տնտեսությունների, համայնքների և տարածաշրջանի զարգացման գործում:

Խնդիր է դրվում լուսաբանել խորհրդատվական ծրագրերի կազմման փուլերը, օպերատիվ պլանավորել ծրագրերի կատարման հաջորդականությունը: Խորհրդատվական ծրագրերի կազմման համար պետք է իրականացնել նախապատրաստական աշխատանքներ, առաջնահերթ ձևակերպել հիմնախնդիրը, բացահայտել խնդրի քանակական և որակական առանձնահատկությունները, ծրագրի նպատակի համալիր ձևակերպում, ցույց տալ այդ նպատակին հասնելու հնարավոր միջոցները ու եղանակները: „Հետադարձ կապ„ հասկացությունը, տեսակները, մեթոդները և գործոնները, որոնք ազդում են հետադարձ կապի կայացման մեխանիզմի վրա:

Ծանոթացում մոնիթորինգի և հետադարձ կապի փոխադարձ կապվածության մասին: Հետադարձ կապի ուսուցում անհատական կամ խմբակային եղանակներով: Կոնկրետ օրինակներով յուրաքանչյուր ուսանող պետք է իրականացնի հետադարձ կապի ամբողջ գործընթացը:

5. **Ժուռնալիստիկա 4 կրեդիտ, 120 ժամ**

Դասընթացի նպատակն ու խնդիրները: Ժուռնալիստիկան որպես հասարակական-քաղաքական լրատվական գործունեության ձև: «Ժուռնալիստիկա» հասկացության բովանդակությունը: Ժուռնալիստիկան սոցիալական ինստիտուտների համակարգում:

Ժուռնալիստի մասնագիտությանը ներկայացվող պահանջները: Ժուռնալիստիկան կեցության ձև է, այլ ոչ պարզապես մասնագիտություն: Ժուռնալիստի մտահորիզոնը և տեղեկացվածությունը նրա զենքերն են:

6. **Միջազգային տնտեսական հարաբերություններ 5 կրեդիտ, 134 ժամ**

Միջազգային տնտեսական հարաբերությունների հասկացությունը, բնորոշումը, առարկան, մեթոդները, խնդիրները և գործառնությունները: Միջազգային տնտեսական հարաբերությունների դերը տնտեսական և սոցիալական զարգացման գործում: Աշխատանքի միջազգային բաժանումը, տնտեսական կապերի զարգացման փուլերը: Արտադրության միջազգային մասնագիտացում, կոոպերացում: Արտաքին առևտրի տեսությունները: Տնտեսական կապերի ձևերը և տեսակները: Միջազգային առևտուրը տնտեսական հարաբերությունների համակարգում: Համաշխարհային շուկայական գների համակարգ: Տեխնոլոգիաների միջազգային առևտուր: Ծառայությունների միջազգային առևտրի տեսակները, շուկայի կարգավորումը: Ազատ տնտեսական գոտիների կազմակերպման անհրաժեշտությունը: Արտաքին տնտեսական գործարքներ, պայմանագրերի տեսակները: Առևտրային տերմիններ: Միջազգային արժույթային հարաբերություն-

ներ, արժույթային քաղաքականություն: Կապիտալի արտահանում, միջազգային հաշվարկներ: Ֆինանսասավարկային միջազգային կազմակերպություններ: Տնտեսական ինտեգրացիա, զարգացման փուլերը և ձևերը: Տնտեսական համագործակցության կազմակերպման անհրաժեշտությունը:

Աշխատուժի միջազգային միգրացիա, պատճառները, կարգավորումը: Հայաստանի արտաքին տնտեսական կապերը: Օտարերկրյա ներդրումներ: Արտաքին կապերի հետագա զարգացումը: Հայաստանի ինտեգրացումը միջազգային կառույցներին: Պետության դերը արտաքին կապերի կարգավորման գործում:

7. **Լրատվական և տեղեկատվական ծառայություններ 4 կրեդիտ, 120 ժամ**

Հաղորդակցությունն իբրև քաղաքական գործընթաց: տեղեկատվական-հաղորդակցական գործընթացների տեսական մեկնաբանությունները: Քաղաքական հաղորդակցության կառուցվածքը: Չանգվածային քաղաքական հաղորդակցություն: քաղաքական հաղորդակցության միջոցների զարգացումը: ՉԼՄ-ը քաղաքական հաղորդակցության համակարգում: ՉԼՄ-ի կառուցվածքը և խնդիրները:

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել Հանրային կապեր՝ PR մասնագիտության հիմունքներին: Դասընթացի յուրացմամբ ուսանողները ձեռք կբերեն ինչպես տեսական գիտելիքներ PR մասնագիտության պատմության, հասարակության մեջ ունեցած դերի, նրա տեսությունների, էթիկական և իրավական կողմերի մասին, այնպես էլ PR-ի ասպարեզում աշխատանքի գործնական փորձ: Հանձնարարությունների միջոցով ուսանողները գործնականորեն կներգրավվեն PR արշավների բոլոր փուլերին՝ հետազոտություն, պլանավորում, իրականացում և գնահատում, ձեռք կբերեն մամուլի համար հաղորդագրություններ, տարեկան հաշվետվություններ, կորպորատիվ ինտերնետային հանգույցներ, PR գործունեությանն առնչվող այլ նյութեր պատրաստելու և PR միջոցառումներ կազմակերպելու հմտություններ:

Պահանջվող սարքավորումներ և պիտույքներ

Դասընթացի ընթացքում ուսանողները պետք է ունենան.

1. մեկ նոթատետր A4 ֆորմատի (ցանկալի է հաստ)
2. մեկ Floppy disk

Էլ-փոստի հասցե (բոլոր հանձնարարություններն ընդունվում են միմյայն էլեկտրոնային ձևով):

8. **Հռետորական արվեստ և խոսքի մշակույթ 4 կրեդիտ, 120 ժամ**

Խոսքի մշակույթի հիմքերն ու բաղկացուցիչները, ոճաբանություն և ճարտասանական արվեստի հիմունքները:

Ժամանակակից հայերենում ոճի հիմնական տեսակների բնութագրումը, գործառնական, իրադրական և անհատական ոճեր: Գործառնական ոճեր: Առօրյա խոսակցական ոճի ընդհանուր բնութագիրը: Գրական լեզվի ընդհանուր վիճակի և նրա հետագա ընթացքի առումով առօրյա խոսակցական ոճի ազդեցության դրական և բացասական միտումները: Ժամանակակից հայոց գրական լեզվի անադարտության պահպանման հիմնական խնդիրները: Գիտական ոճի ընդհանուր բնութագիրը: Գիտական և կրթական-ուսումնական ոլորտների գործունեության լեզվական խոսքային չափանիշները: վարչագործարարական ոճի ընդհանուր բնութագիրը: Վարչատնտեսական, միջազգային, դիվանագիտական ոլորտներում կիրառվող լեզվական խոսքային չափանիշների առանձնահատկությունները: Այդ ո-

լորտներին վերաբերող փաստաթղթերի կազմման և դրանց համակարգման հիմնական սկզբունքները: Գովազդային տեքստերի ձևավորման և դրանց մատուցման հիմնական եղանակները: Հրապարակախոսական ոճի ընդհանուր բնութագիրը: Հուզական հոգեբանական ներգործության և փաստարկվածության ու տրամաբանականության մոտեցումների համադրումը որպես այդ ոճի գործառության հիմնական սկզբունք: Գեղարվեստական ոճի ընդհանուր բնութագիրը: Այդ ոճի հիմնական չափանիշների (գրական լեզվի մաքրությունն ու կատարելությունը, գեղագիտականությունը և այլն) պարզաբանումը հայ և համաշխարհային գրական մեծագույն արժեքների օրինակով: Ծարտասանական արվեստի պատմության և հիմնական սկզբունքների համառոտ ակնարկ:

Ծարտասանական արվեստի կազմախոսական-բնախոսական հիմքերը, ձայնի դրվածքը, շնչառության տեխնիկան, հնչյունի ձևավորման և արտաբերման տեխնիկան ու կուլտուրան: Խոսքի կազմակերպման հոգեբանական, հուզական և տրամաբանական մեխանիզմները: Ըստ գյուղատնտեսության ոլորտի առանձին մասնագիտացումների՝ մասնագիտական տերմինների հատուկ բառացանկեր և տեքստեր:

9. **Հեռուստառադիո ժուռնալիստիկա 4 կրեդիտ, 120 ժամ**

Դասընթացի առարկան և խնդիրները, տեղը և դերը պրոֆեսիոնալ հեռուստալրագրողներ պատրաստելու գործում, գիտական գրականության բնութագիրը:

Ռադիոժուռնալիստիկան որպես զանգվածային լրատվության բաղկացուցիչ մաս: Ռադիոժուռնալիստիկայի առաջացման պայմաններն ու զարգացման փուլերը: Ռադիոյի տեղն ու դերը հասարակության կյանքում:

Ռադիոն ՁԼՄ-ի մասին ընդունված օրենքների համակարգում: Ռադիոյի յուրահատկությունը և նրա դերը հասարակական կարծիքի ձևավորման և արտահայտման ժամանակ:

10. **Տեղեկատվական աշխատանքների կազմակերպում 4 կրեդիտ, 120 ժամ**

Ներածություն՝ առարկան, խնդիրները: Լրատվամիջոցի խնդիրները, ընթերցողների շրջանակը: Խմբագրական կոլեկտիվ՝ կոլեկտիվ և անհատական աշխատանքի միասնությունը: Խմբագրական աշխատանքի կազմակերպման սկզբունքները՝ գաղափարայնություն, հայրենասիրություն, մասսայականություն, ճշմարտացիություն, հումանիզմ: Դժմարտությունը որպես լրագրողական հաջողության գրավական: Խմբագրական աշխատանքի համակարգում: Խմբագրության ղեկավարում՝ խորհրդակցական և խմբագրական խորհուրդ: Խմբագրության քարտուղարությունը, ֆունկցիոնալ բաժիններ՝ գաղափարական, ինֆորմացիայի, նամակների, հրապարակախոսության: Հատուկ թղթակից: Օրաթերթ, շաբաթաթերթ, ամսաթերթ: Ինչպես գետեղել և տեղաբաշխել նյութերը համարում: Նյութերի մատուցման ձևերն ու եղանակները: Վերնագիրը թերթում: Լրագրողի աշխատանքի կազմակերպում՝ անհատական պլանավորում, տեղեկատվության հավաքում, ժամանակակից տեխնիկայի կիրառում:

11. **Ժուռնալիստական էթիկա 2 կրեդիտ, 60 ժամ**

Էթիկական արժեքների ձևավորումը:

Էթիկայի երեք փիլիսոփայական տեսությունները (դեոնթոլոգիա, թելեոլոգիա, իրավիճակային էթիկայի կանոններ):

ՁԼՄ-ի գործունեության էթիկական կարգավորում (էթիկայի կանոնների

համակարգի անհրաժեշտությունը, ձևավորումը, զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը այդ համակարգում, համակարգի պահանջները (հմաստություն, արդարություն, ազատություն, հաշվետվություն)):

Գեայքերի քննարկում:

Էթիկական որոշումների կայացում և կիրառում:

Որոշումների կայացման գործընթացը (էթիկական երկրնտրանքի ճշգրտում, այլընտրանքային լուծումների որոնում, «Փոթքերի արկղ» մոդելը, որոշումների կայացման գործընթացը պայմանավորող գործոնները, հասարակական, սոցիալական արժեքների և ժուռնալիստական սկզբունքների ազդեցությունը էթիկական որոշումների կայացման գործընթացի վրա:

Գեայքերի քննարկում: Ժուռնալիստական էթիկայի կարևորագույն սկզբունքները (մի՞ֆ, թ՞ե իրականություն): Աշգրտություն և անկողմնասպառություն: Օբյեկտիվություն և արդարություն: Պատասխանատվություն և հաշվետվություն:

Ժուռնալիստական էթիկայի հիմնական պրոբլեմները: Շահերի բախում, գրագողություն, լրատվության անանուն աղբյուրների օգտագործում, կասկածելի մեթոդների կիրառում (թաքնված տեսախցիկներ և ձայնագրիչ, ինքնության կեղծում), կաշառք, դրամի միջոցով ինֆորմացիայի հայթայթում, սենսացիոն լուսաբանում, թաքնված գովազդ:

Տնտեսական ճնշումները և հասարակական պատասխանատվությունը: Կորպորատիվ շահերը ընդդեմ հասարակական պատասխանատվության, պրագմատիզմը և էթիկան:

Գովազդ: «Որա՞կ, թ՞ե եկամուտ» հիմնական երկրնտրանքը:

Փողը, խմբագիրը, լրագրողը և էթիկան:

Ողբերգական պատահարների, աղետների, զինված բախումների, ահաբեկչությունների լուսաբանում:

Նոր տեխնոլոգիաները և էթիկայի կանոնները: Անպատասխանատվությունը ինտերնետում. էլեկտրոնային ոլորտը կարգավորող էթիկայի կանոնների ստեղծման անհրաժեշտությունը:

Օրենքը և էթիկան (կապը, առնչությունները), անձի մասնավոր կյանքի իրավունքը և էթիկան, զրպարտությունը և էթիկան, դեպի էթիկական ժուռնալիստիկա:

12.

Խորհրդատվական տեղեկատվական տեխնոլոգիաներ

8 կրեդիտ, 240 ժամ

Խորհրդատվական տեղեկատվական ծառայության (ԽՏԾ) հիմնական դերը կայանում է նրանում, որպեսզի օգնի գյուղացիական տնտեսության վարողին ընդունելու ճիշտ որոշում, որը կօգնի նրան լավագույն ձևով հասնի սեփական նպատակների իրականացմանը:

ԽՏԾ-ը պետք է աջակցի ազարակատերերին և գյուղական համայնքներին արդիականացնելու գյուղատնտեսական արտադրությունը, շուկայավարման ձևերը և բարելավել կենսամակարդակը:

ԽՏԾ նպատակներն են.

- իրականացնել խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ,
- ուսումնասիրել պարենի ներքին պահանջարկը և նպաստել դրա ապահովմանը,
- աջակցել բնապահպանական տեսակետից նպաստավոր գյուղատնտեսական, վերամշակման և իրացման համակարգի ստեղծմանը: ԽՏԾ-յան դերը կայանում է նրանում, որպեսզի ուսուցանի հողագործին և նրանց ընտանիքի անդամներին արտադրության ա-

ճին նպաստող որոշումների ընդունմանը, որի իրականացման համար անհրաժեշտ է.

- օգնել բացահայտելու ծագած հիմնախնդիրները վաղ փուլերում,
- օգնել բացահայտելու արտաքին գործոնների ծագումը՝ շուկայի նոր հնավորությունները,
- օգնել հիմնահարցի լուծման այլընտրանքային հնարավորությունը,
- օգնել այլընտրանքային որոշումների իրականացման արդյունքում ճիշտ գնահատելու ծագող հետևանքները,
- օգնել ընտրված որոշման իրականացման գործընթացում:

ԽՏԾ-ն առավել արդյունավետ մեթոդը կայանում է նրանում, որպեսզի օգնել ազարակատիրոջը հիմնահարցերի լուծման համար փորձել տարբեր հնարավորություններ: Սեփական փորձից ստացված գիտելիքները առավել արդյունավետ միջոցն է որոշումներ ընդունելու գործընթացում:

Մյուս արդյունավետ մեթոդը կայանում է նրանում, որպեսզի ազարակատերերը սովորեն իրենց կոլեգաների փորձից կամ փորձա-ցուցադրական աշխատանքներից: Այդ առումով ԽՏԾ-ն աշխատողների կարևոր առաքելությունն է գյուղատնտեսական արտադրողների միջև փորձի փոխանակման խթանումը:

13.

Հասարակության հետ կապերի և տեղեկատվ. կազմակերպում

8 կրեդիտ, 246 ժամ

Խորհրդատվական տեղեկատվական ծառայության (ԽՏԾ) կարևոր և առաջնային խնդիրներից է հասարակության լայն շրջաններին տեղեկատվությամբ ապահովումը (սեմինարներ, տեղեկատվական թերթիկներ, մամուլ, ռադիո և հեռուստատեսություն):

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կարևոր առանձնահատկությունն է՝ կանոնավոր և օպերատիվ տեղեկատվության նորացումը և մատչելիությունը հասարակության լայն զանգվածներին փոխանցելու համար:

Տեղեկատվության նորագույն տեխնոլոգիաների օգտագործումը հնարավորություն է տալիս ապահովելու.

- գյուղատնտեսության աշխատողների համար ԽՏԾ-յան մասնագետների և գործակալների կողմից կարևոր նորագույն տեղեկատվության ապահովումը, հասարակության հետ մշտական կապերի ստեղծումը և հետադարձ կապի ապահովումը:
- գիտելիքների, տեղեկատվության և առաջավոր փորձի տարածումը գյուղատնտեսական արտադրողների շրջանում (արտադրության նորագույն տեխնոլոգիաներ, շուկայի ուսումնասիրություն, օրենսդրություն և այլն):

ԽՏԾ-յան բնագավառում, որպես տվյալների բանկ, որից կարող են օգտվել գյուղատնտեսության բնագավառի աշխատողներ, կարելի է նշել իրավաբանական փաստաթղթերը, որոնք կարգավորում են հողօգտագործման հարկային, պարարտանյութերի և թունաքիմիկատների ձևերի, գյուղատնտեսական տեխնիկայի տեսակների, մշակաբույսերի ներմուծված և շրջանացված սորտերի և սերմերի մասին տեղեկատվությունը:

Հասարակության հետ կապերի կազմակերպումը ներառում է լայն մասշտաբի խորհրդատվություն, ուսուցում, ինչպես նաև համայնքների զարգացման ծրագրերի իրականացում.

- համայնքների կարիքների և չլուծված հիմնահարցերի բացահայտում,
- մարքեթինգի վերաբերյալ կողմնորոշվելու ունակությունների ուսուցում

- համայնքներում տնային էկոնոմիկայի, տնայնագործության, մթեր- քի վերամշակման վերաբերյալ ուսուցողական ծրագրեր,
- գյուղատնտեսական արտադրության և իրացման միավորումների ստեղծման խթանում,
- գյուղական երիտասարդության կրթական, պատանեկան ակումբ- ների հիմնման և ագրոտուրիզմի զարգացման ծրագրեր,
- վարկային և դրամաշնորհային ծրագրերից օգտվելու ուսուցողա- կան ծրագրեր:

**ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈՎ
Կարիքների բացահայտման մեթոդաբան
Խորհրդատ. և տեղեկատ. արդյունավ. գնահատում
Խորհրդատ. և տեղեկատ. աշխ. պլանավ. և կանխատեսում
ՖԱԿՈՒԼՏԱՏԻՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈՎ**

5. 310111 Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն
դասիչ, մասնագիտության անվանում

ՍԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ տնտեսագիտության քակալավրի ՊԱՏՐԱՍՏ- ՍԱՆ

որակավորման աստիճան

ՀԻՍԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. տնտեսագիտության քակալավրի պատրաստման հիմնական կրթական
որակավորման աստիճան

ծրագրի յուրացման ժամկետը, ներառյալ ուսանողի հետազոտական աշխատանքը, առկա ուսուցման ձևով 242 շաբաթ է, որից.

- տեսական ուսուցումը՝ 150 շաբաթ,
 - քննաշրջանները՝ 27 շաբաթ,
 - պրակտիկաները՝ 19 շաբաթ,
 - այդ թվում ուսումնական պրակտիկա 4 շաբաթ
 - արտադրական պրակտիկա 10 շաբաթ
 - ն/դ պրակտիկա 5 շաբաթ
 - արձակուրդները 36 շաբաթ
- Եզրափակիչ պետական որակավորում և դիպլոմային աշխատանքի պաշտպանությունը՝ 10 շաբաթ
ընդ. – 242 շաբաթ

Դիպլոմային աշխատանքի թեման հանձնարարվում է ուսանողին ուսուցման 3-րդ կուրսում, արտադրական պրակտիկայի աշխատանքներից առաջ: Դիպլոմային աշխատանքի ղեկավարը նշանակվում է ամբիոնի կողմից պրոֆեսորներից, դոցենտներից և առաջատար ասիստենտներից:

Դիպլոմային աշխատանքի կատարման ժամանակացույցը, ընթացիկ վերահսկման և ատեստավորման ձևը, պաշտպանության թույլատրման կարգը սահմանում է բուհը (ֆակուլտետը), որը հաստատում է բուհի գիտական խորհուրդը:

5.2. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ունեցող անձանց համար
տնտեսագետ, քակալավր -ի պատրաստման հիմնական կրթական
որակավորման աստիճան

ծրագրերի յուրացման ժամկետները հեռակա ուսուցման ձևով երկարացվում են մինչև 1 տարի՝ սույն պետական կրթական չափորոշիչի թ. 1.2-ով սահմանված ժամկետի նկատմամբ:

- 5.3. Ուսանողի ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն ծավալը սահմանվում է շաբաթական 45 ժամ՝ ներառյալ լսարանային և արտալսարանային (ինքնուրույն) աշխատանքները:
- 5.4. Առկա ուսուցման ձևով սովորող ուսանողի լսարանային պարապմունքների ծավալը չպետք է գերազանցի շաբաթական 30 ժամ: Նշված ծավալում չեն ընդգրկվում ֆիզիկական կուլտուրայի և ֆակուլտատիվ դասընթացների դասաժամերը: Ուսումնական տարվա տեսական ուսուցման տևողությունը 34 շաբաթ է:
- 5.5. Հեռակա ուսուցման ձևով սովորող ուսանողի համար պետք է ապահովվի տարեկան 160 ժամից ոչ պակաս ծավալով դասախոսների հետ պարապմունքներ անցկացելը:
- 5.6. Ուսումնական տարվա արձակուրդները պետք է 7-10 շաբաթ լինեն, այդ թվում՝ 2 շաբաթից ոչ պակաս՝ ձմեռային քննաշրջաններից հետո:

6. 310111 Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն
դասիչ, մասնագիտության անվանում

**ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ**

տնտեսագիտության

բակալավրի

որակավորման աստիճան

**ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

6.1 տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական
որակավորման աստիճան

ծրագրի մշակմանը ներկայացվող պահանջները.

6.1.1. Սույն պետական կրթական չափորոշիչի հիման վրա բուհն ինքնուրույն է մշակում և հաստատում տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական
որակավորման աստիճան

կրթական ծրագիրը:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացների ուսումնասիրությունը պարտադիր է, իսկ նրանց ցանկը երաշխավորական բնույթ է կրում, որը կարող է փոփոխել կամ լրացնել բուհը:

Ուսումնական դասընթացի բաղադրիչների տեսակները (դասախոսություն, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ, տնային և կուրսային աշխատանքների խորհրդատվություն և այլն) և ծավալները՝ դասընթացին հատկացված դասաժամերի շրջանակում սահմանում է բուհը: Ուսուցման ողջ շրջանում ուսումնական ժամաքանակի ընդհանուր հաշվեկշռում ակտիվ մեթոդներով ուսանողի տեսական ուսուցումը չպետք է ցածր լինի 25%-ից:

Ուսանողի գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի տեսակն ընտրում է բուհը: Տվյալ դասընթացից ուսանողի գիտելիքների եզրափակիչ գնահատականը չպետք է հիմնավորվի միայն վերջին քննության (ստուգարքի) արդյունքով, այն պետք է հաշվի առնի ուսանողի ակտիվությունը դասընթացից և ընթացիկ առաջադիմությունը կիսամյակի (ների) ընթացքում: Եզրափակիչ գնահատման դեպքում գնահատականի 40%-ը ձևավորում է ընթացիկ առաջադիմությանը և միջանկյալ ստուգումներով, իսկ 60%-ը՝ եզրափակիչ քննության (ստուգարքի) արդյունքով:

Քննությունների անցկացման հիմնական ձևը գրավոր կամ գրավոր-բանավորն է: Բացառության կարգով բուհը կարող է սահմանել բանավոր քննություններ, բայց դրանք չպետք է գերազանցեն քննությունների ընդհանուր քանակի 25%-ը: Բուհի իրավունքն է ուսումնական դասընթացի եզրափակիչ ստուգման եղանակի (ստուգարք կամ քննություն) ընտրությունը և ձևի սահմանումը:

Ուսանողների գիտելիքների ընթացիկ գնահատման համակարգում բուհն օգտագործում է իրեն նպատակահարմար գնահատման սանդղակ: Միջազգային մասնագիտական կրթական համակարգին ինտեգրվելու և ուսանողների ակադմիական շարժունակությունն ապահովելու նպատակով ուսումնական գործընթացում գերադասելի է գիտելիքների ստուգման և գնահատման վարկային (կրեդիտային) համակարգի ներդրումը և օգտագործումը: Դասընթացից եզրափակիչ գնահատական նշանակելու դեպքում անհրաժեշտ է անցնել գիտելիքների գնահատման ավանդական համակարգին («գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար», «ստուգված», «չստուգված»):

Կուրսային աշխատանքը դիտարկվում է որպես դասընթացի ուսումնական բաղադրիչ և իրականացվում է այդ դասընթացին հատկացրած դասժամերի հաշվին: Հիմնական մասնագիտական դասընթացներից կուրսային աշխատանքի կատարելը պարտադիր է, բայց ուսուցման ողջ շրջանում դրանք չպետք է գերզանցեն 5-ը:

Մասնագիտության ուսումնական պլանով (հավելված 2) նախատեսված բոլոր ուսումնական դասընթացների, կուրսային աշխատանքների և պրակտիկաների համար պարտադիր է եզրափակիչ գնահատականի նշանակումը:

Մասնագիտացման դասընթացների կրթաբլոկը ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկի տրամաբանված հաջորդականությունն է, որը ընտրած մասնագիտությամբ նախատեսված գործունեության բնագավառներում նպաստում է ուսանողի խոր մասնագիտական գիտելիքների և ունակությունների ձեռքբերմանը: Այն մասնագիտությունների գծով, որոնց անվանման մեջ առկա է ագրարային արտահայտությունը, ընտրած բնագավառի համար շրջանավարտի պատրաստման առանձնահատկությունները առաջին հերթին հաշվի են առնվում մասնագիտացման դասընթացների միջոցով: Բուհը պետական կրթական չափորոշիչի հավելված 1-ում տրված ցանկից ինքնուրույն է ընտրում իրեն համապատասխանող մասնագիտացումը և իրավունք ունի փոփոխելու կամ լրացնելու մասնագիտացման դասընթացների ցանկը կամ էլ ՀՀ ԿԳՆ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչը մշակող գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցրած՝ ձևավորելու նոր մասնագիտացում:

Ֆակուլտատիվ դասընթացների կրթաբլոկի ցանկը նույնպես երաշխավորական բնույթ է կրում և ուսանողի համար պարտադիր չէ, իսկ դրանց հաճախելու դեպքում կրթաբլոկին հատկացրած ժամաքանակների 30%-ին վերաբերող դասընթացներից պարտադիր է ուսանողների գիտելիքների ստուգումը և գնահատումը:

6.1.2. Մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու դեպքում բուհն իրավասու է՝

- 5%-ի սահմաններում փոփոխել դասընթացների կրթաբլոկների հատկացրած ժամաքանակները, իսկ առանձին դասընթացներինը՝ մինչև 10%-ի սահմաններում,

- ձևավորել հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթաբլոկ, որի հանրապետական բաղադրիչում նշվածներից պարտադիր է հետևյալ դասընթացների առկայությունը՝

 - «Ֆիզիկական կուլտուրա»,

 - «Հայ ժողովրդի պատմություն»,

 - «Հայոց լեզու և հայ գրականություն»,

 - «Ռուսաց լեզու և խոսքի մշակույթ»,

 - «Օտար լեզու»,

 - «Փիլիսոփայություն»:

Մնացած դասընթացները կարող են ընդգրկվել ըստ բուհի հայեցողության: Այս դեպքում հնարավոր է նրանց միջդասընթացային միավորումը՝ բովանդակության պարտադիր նվազագույնի պահպանմամբ:

Եթե դասընթացը ընդհանուր մասնագիտական կամ մասնագիտացման դասընթացների կրթաբլոկի մի մասն է կազմում, դրա համար հատկացված ժամերը վերաբաշխվում են ՀՍՏ դասընթացների վրա:

Ֆիզիկական կուլտուրայի պարապմունքները հեռակա և դրսևկության ձևերով ուսումնառող ուսանողների համար կարող են իրականացվել նրանց ցանկությամբ,

- ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍ) դասընթացների դասավանդումն իրականացնել հեղինակային դասախոսությունների, անհատական և կոլեկտիվ գործնական պարապմունքների, առաջադրանքների և սեմինարների ձևով՝ բուհի մշակած ծրագրերով, հաշվի առնելով բուհի մասնագիտական առանձնահատկությունները, դասախոսների հետազոտական ուղղվածությունը և հակումները, որոնք կապահովեն կրթաբլոկի դասընթացների թեմատիկայի լուսաբանումը՝ ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը համապատասխան,

- սահմանել ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍ), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸԲ) կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների առանձին բաժինների դասավանդման անհրաժեշտ խորությունը՝ կրթաբլոկների դասընթացների ուղղվածությանը համապատասխան և մասնագիտության առանձնահատկությունների հաշվառմամբ: ԸԲ կրթաբլոկում պարտադիր է «Քաղ, պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի դասավանդումը: Բուհական բաղադրիչներին առանձնացված ժամաքանակները բուհի հայեցողությամբ կարող են օգտագործվել հանրապետական բաղադրիչներում ընդգրկված դասընթացների ավելի խորը դասավանդման համար,

- իրականացնել 310111 Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և

դասիչ, մասնագիտության անվանում
տեղեկատվություն մասնագիտությամբ տնտեսագիտության բակալավրի
որակավորման աստիճան

պատրաստման հիմնական կրթական ծրագիրը կրճատված ժամկետով՝ համապատասխան ուղղվածության միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող ուսանողների համար: Ուսուցման ժամկետների կրճատումը կատարվում է մասնագիտական կրթության նախորդ աստիճանում ուսանողների ձեռք բերած գիտելիքների, ունակությունների և հմտությունների հիման վրա: Այդ դեպքում ուսուցման տևողությունը 2 (երկու) տարուց պակաս չպետք է լինի: Կրճատված ժամկետով ուսուցումը թույլ է տրվում նաև այն անձանց, որոնց կրթական մակարդակը և բացառիկ ընդունակությունները բավարար հիմք են նման ուսուցում իրականացնելու համար,

- առանձին դեպքերում, մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող ԿԳՆ գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցված՝

- 310111 Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն
դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտության համար բուհերն իրավունք ունեն մինչև 20%-ի սահմանում փոփոխել ընդհանուր մասնագիտական դասընթացների (ԸՄԴ) կրթաբլոկի ժամաքանակը, իսկ առանձին դասընթացները՝ մինչև 40%-ի սահմաններում:

6.2. Ուսումնական գործընթացի կադրային ապահովման պահանջները.

տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական
որակավորման աստիճան

ծրագրերի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, որոնք, որպես կանոն, ունեն դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրոս) և հետևողականորեն զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ: Հատուկ մասնագիտացնող դասընթացներ դասավանդող դասախոսները, որպես կանոն, պետք է ունենան գիտական աստիճան (գիտական կոչում և այլն) և/կամ համապատասխան գործունեության ոլորտում աշխատանքի փորձ:

Գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսները պետք է կազմեն պրոֆեսորադասախոսական կազմի 50%-ից ոչ պակասը:

Հիմնական հաստիքային դասախոսները և 0,25 հաստիքից բարձր ձևակերպված համատեղողները նույնպես պետք է կազմեն ընդհանուրի 50%-ից ոչ պակաս:

6.3. Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական ապահովման պահանջները.

տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական

որակավորման աստիճան

ծրագրերի իրականացումը պետք է ներառի ուսանողների կողմից մասնագիտական դասընթացների լաբորատոր, գործնական (սեմինար) աշխատանքների կատարում, ներառյալ որպես պարտադիր բաղադրիչ՝ համակարգչային կիրառական ծրագրային փաթեթների օգտագործմամբ գործնական առաջադրանքների կատարում: Պարտադիր պահանջ է նաև անհրաժեշտ ինֆորմացիոն բազայի ստեղծումը, որն ապահովում է բարձրորակ մասնագետի պատրաստումը և ուսանողի մուտքը ինֆորմացիոն աղբյուրներ, ներառյալ internet-ը:

տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական

որակավորման աստիճան

ծրագրերի իրականացումը պետք է ապահովվի յուրաքանչյուր ուսանողի մուտքով դեպի գրադարանային ֆոնդեր և տվյալների բազաներ, որոնք ըստ բովանդակության համապատասխանում են հիմնական կրթական ծրագրով նախատեսված դասընթացների բաղադրիչներին (դասախոսություններ, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ, կուրսային և դիպլոմային աշխատանքների խորհրդատվություն, պրակտիկաների ծրագրեր) նվիրված մեթոդական ձեռնարկների և ցուցումների առկայությամբ, ինչպես նաև տեսալսողական, բազմամիջավայրային նյութերով և ցուցադրական ձեռնարկներով:

Բուհի գրադարանը պետք է հագեցված լինի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների ուսումնամեթոդական համալիրներով, մասնագիտության նորմատիվ-իրավական ակտերով, տեղեկատու գրականությամբ և չափորոշիչներով:

6.4. Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման պահանջները

տնտեսագիտության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիր

որակավորման աստիճան

իրականացնող ՀՊԱՀ պետք է ունենա նյութատեխնիկական բազա, որը համապատասխանում է գործող սանիտարահիգիենիկ նորմերին և հակահրդեհային կանոններին, ապահովում է օրինակելի ուսումնական պլաններով նախատեսված լաբորատոր, սեմինար, գործնական պարապմունքների և միջդասընթացային պատրաստման բոլոր ձևերի և ուսանողների հետազոտական աշխատանքների կատարումը:

6.5. Պրակտիկաների կազմակերպման պահանջները

Ուսուցման ընթացքում առանձին մասնագիտական դասընթացների և ընտրած մասնագիտացման գծով գործնական ունակությունների, ապագա աշխատավայրում հմտություններ և փորձառումներ ձեռք բերելու նպատակով բնագավառի կազմակերպահրավական տարբեր ձևերի կազմակերպություններում, հիմնարկներում և հաստատություններում կազմակերպվում են ուսանողների ուսումնական արտադրական նախադիպլոմային պրակտիկաներ: Ուսանողի նախադիպլոմային պրակտիկան մասնագիտության ուսումնական պլանի պարտադիր բաղադրիչն է, որի կազմակերպման և իրականացման պատասխանատուն բուհն է: Նախադիպլոմային պրակտիկան կազմակերպվում է այն հաշվով, որպեսզի շրջանավարտը կարողանա այդ ընթացքում ստացած փորձառությունը օգտագործել իր դիպլոմային աշխատանքը ձևավորելիս: Եթե շրջանավարտը ուսուցումը համատեղում է աշխատանքի հետ, բուհն իրավունք ունի թույլատրել աշխատավայրում պրակտիկայի անցկացում, եթե շրջանավարտի աշխատանքի բնույթը համապատասխանում է բուհում ուսումնառած մասնագիտությանը:

Պրակտիկան կարող է կազմակերպվել նաև որոշակի կազմակերպություններում՝ նախապես կազմված անհատական ծրագրով, եթե շրջանավարտը նույն կազմակերպությունում պաշտոն է զբաղեցնում:

Արտադրական պրակտիկայի տեղերի բացակայության դեպքում բուհը (ֆակուլտետը) այն կազմակերպում է սեփական նյութատեխնիկական բազայի վրա, եթե այն հագեցված է ժամանակակից սարքավորմամբ և ծրագրային միջոցներով:

7. 310111- Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն

դասիչ, մասնագիտության անվանում

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՊԱՏՐԱՍՏԱՆ

ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

7.1. Շրջանավարտը պետք է կարողանա լուծել սույն պետական կրթական չափորոշիչի ք.1.2 կետում նշված որակավորմանը համապատասխանող խնդիրները:

տնտեսագիտության բակալավրը պետք է.

որակավորման աստիճան

ա. հումանիտար և սոցիալ-տնտեսական գիտելիքների բնագավառում՝

- իմանա չ՛հ սահմանադրությունը և իր բնագավառի օրենքները
- ազատ տիրապետի մասնագիտական հայոց լեզվին (գրավոր և բանավոր)
- հաղորդակցվի, օգտվի գրականությունից և ինտերնետային գրականության աղբյուրներից երկու օտար լեզվով
- ունենա պատկերացում առողջ կենսակերպի մասին, տիրապետի ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին
- իմանա հայ ժողովրդի պատմությունը և արդի քաղաքական զարգացումները.
- ծանոթ լինի համաշխարհային մշակույթին, տիրապետի վարվելաձևի կուլտուրային, իմանա էթիկական և իրավական նորմեր, որոնք կարգավորում են մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները
- գիտենա տնտեսագիտություն, կառավարում, միկրո և մակրոտնտեսական օրենքները, անցումային շրջանի առանձնահատկությունները

բ. բնագիտության և մաթեմատիկայի բնագավառում՝

- ծանոթ լինի ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքներին և հայեցակարգերին, բնապահպանական գլոբալ և տարածքային հիմնախնդիրներին,
- տիրապետի մաթեմատիկայի հիմնական բաժիններին, հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության մեթոդներին, մաթեմատիկական մոդելավորման եղանակներին,
- տիրապետի ինֆորմացիայի հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդներին և կարողանա օգտագործել ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաներ

գ. մասնագիտական գործունեության բնագավառում՝

տնտեսագիտության բակալավրի հատուկ պատրաստությանը վերաբերվող

որակավորման աստիճան

պահանջները սահմանում է տվյալ մասնագիտացումն առաջադրող բուհը՝ չ՛հ ԿԳՆ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցրած, որոնք չ՛հ ԿԳՆ-ում մասնագիտացումը հաստատելուց հետո միասնական են դառնում այլ բուհերի համար, բխում են մասնագիտացման կրթաբլոկի բովանդակությունից և տվյալ մասնագիտացմամբ մասնագետներ պատվիրած կազմակերպության գործառնություններից:

Նշված փորձառությունները ներառում են՝

- հետազոտական աշխատանք վարելու, վերացական տրամաբանական մտածողության, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները կիրառելու և քննադատական վերլուծության ունակություններ,
- անձանոթ պայմաններում առաջացած ոչ կոնստրուկտիվ հիմնահարցերի բացահայտման, հաղթահարման և վերջնական լուծման, սեղմ ժամանակացույցով աշխատանքներ կազմակերպելու ընդունակություն,
- մասնագիտական գործունեության բնագավառում նորամուծությունների նկատմամբ ընկալունակության ցուցաբերում:

տնտեսագիտության բակալավրիի՝ մարդկանց հետ աշխատելու փորձառությունը

որակավորման աստիճան

ենթադրում է նրա ունակությունները՝

- այլ անձանց հետ փոխգործակցելու, կոլեկտիվում նրանց հետ հաղորդակցվելու,
- խնդիրներ ձևավորելու և դրանք ենթակայաներին պատվիրելու,
- մարդկանց ստեղծագործական աճի ձգումը խրախուսելու և զարգացումն ապահովելու,
- ծագած տարաձայնությունները և բախումները լուծելու,
- տարբեր զարգացման և մտավոր մակարդակի տեր մարդկանց հետ համագործակցելու,
- մասնագիտական հարցերի շրջանակներում ընդունելի որոշումների հասնելու նպատակով բանակցությունների վարելու,
- տարաբնույթ և տարասեռ մշակութային միջավայրերում աշխատելու և այլն:

տնտեսագիտության բակալավրի` ինֆորմացիայի հետ աշխատելու փորձառությունը
 որակավորման աստիճան

պահանջում է պարտադիր հմտություններ`

- պաշտոնական և ոչ պաշտոնական իրավիճակներում սեփական կարծիքը գրավոր և բանավոր ձևերով շարադրելու, քննարկելու և գործուն կարգով պատշապանելու,
- լեզվային և մշակութային տարբերությունների հաշվառմամբ գրավոր ինֆորմացիան լսելու և վերլուծորեն ընկալելու,
- բանավոր, տպագրված և էլեկտրոնային աղբյուրներից ստացված ինֆորմացիոն որոնելու, ստանալու, համակարգելու, գրավոր ձևակերպելու և օգտագործելու:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման գծով

տնտեսագիտության բակալավրը պետք է ծանոթ լինի տվյալների մշակման
 որակավորման աստիճան

երկուսից ոչ պակաս համակարգերի, համակարգչային և բազմաօգտագործման տեղային ցանցային համակարգերին, ինչպես նաև կարողանա կատարել ինֆորմացիայի որոնում տվյալների ցանցային բազաներում (www), օգտվել էլեկտրոնային փոստից, տվյալների բազաների փաթեթից:

տնտեսագիտության բակալավրը պետք է հասկանա իր մասնագիտության էությունը
 որակավորման աստիճան

և սոցիալական նշանակալիությունը, իր որակավորման շարունակական բարձրացման անհրաժեշտությունը հետբուհական և լրացուցիչ կրթություն ստանալու կամ էլ նոր գիտելիքների ինքնուրույն տիրապետման միջոցով:

7.2. տնտեսագիտության բակալավրի եզրափակիչ պետական որակավորման
 որակավորման աստիճան
 պահանջները

8.1. 310111 Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն
 դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտացմամբ տնտեսագիտության բակալավրի եզրափակիչ պետական
 որակավորման աստիճան

որակավորում ներառում է` ավարտական որակավորման (դիպլոմային) պաշտպանությունը և պետական քննության հանձնումը, որոնք թույլ են տալիս բացահայտելու շրջանավարտի տեսական և գործնական պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշիչներով սահմանված մասնագիտական խնդիրների լուծման բնագավառում:

Բովանդակային առումով ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքը պետք է`

- ներկայացվի որպես բնագավառի հիմնահարցերից մեկին վերաբերող տեսական, վերլուծական, սոցիալ-տնտեսագիտական կամ փորձարարական հետազոտություն, որում շրջանավարտը բացահայտում է իր տեսական գիտելիքները և գործնական ունակությունները, որոնք թույլ են տալիս ինքնուրույն լուծելու մասնագիտական բնույթի խնդիրներ,
- ցույց տա շրջանավարտի կողմից գիտական և համակարգչային վերլուծության

մեթոդների յուրացման աստիճանը, ունակությունը կատարելու տեսական ընդհանրացումներ և գործնական եզրակացություններ, հիմնավորված առաջարկություններ և երաշխավորություններ բնագավառի հիմնահարցերի լուծման կատարելագործման վերաբերյալ,

- կրի ստեղծագործական բնույթ՝ հավաստի վիճակագրական տվյալների օգտագործմամբ,

- բացահայտի շրջանավարտի պատրաստության աստիճանը ինքնուրույն աշխատելու գիտական, ուսումնական, խորհրդատվական կառույցներում ինչպես նաև գյուղատնտեսության արտադրանքի, վերամշակման և ագրոբիզնեսի ոլորտում:

- համապատասխան նյութի տրամաբանված և հստակ շարադրման պահանջներին և հենվի հավաստի փաստերի վրա,

- արտացոլի շրջանավարտի ունակությունը օգտագործելու տեղեկատվության որոնման, ընտրության, համակարգման և մշակման արդի մեթոդները, աշխատել բնագավառի նորմատիվ-իրավական ակտերի հետ,

- ձևավորված լինի հրատարակչական արդի նորմատիվներին և պահանջներին համապատասխան, ունենա հետազոտական աշխատանքի հաշվետվությանը բնորոշ կառուցվածք և 60-70 էջ համակարգչային շարվածքի ծավալ:

Ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքների թեմատիկան սահմանում է մասնագիտացնող ամբիոնը: Թեմատիկայում պարտադիր կարգով պետք է ներառվեն՝ թեմայի անվանումը, հիմնավորումը և արդիականությունը, նպատակը, խնդիրները և ուսումնասիրության մեթոդիկան, փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները, էկոլոգիական և տնտ. արդյունավետությունը, եզրակացությունները ու առաջարկությունները, օգտագործած գրականության ցանկը:

8.2. Պետական քննությանը ներկայացվող պահանջները.

Եզրափակիչ որակավորման (պետական) քննության բովանդակությունը, անցկացման ձևը և ուսանողների գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է բուհը (ֆակուլտետը) և հաստատում բուհի գիտական խորհուրդը: Պետական քննություն հանձնվում են հետևյալ առարկաներից.

- Ագրարային քաղաքականություն
- Խորհրդատվական տեխնոլոգիաներ և ծրագրեր
- Հասարակության հետ կապեր և տեղեկատվության կազմակերպում
- ԱԱՀ էկոնոմիկա, կազմակերպում և կառավարում

- ԿԱԶՄՈՂՆԵՐ

ԷԶ 247

ազատ էջ

310111